

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ 4

Մարիետ Սիմոնյան

ՀԱՅՈՑ Լ ԵԶՈՒ

գիրք-տետր

չորրորդ դասարանցիների համար



Նկարիչ՝ Նորայր Այվազյան
Գոհար Սանոյան

ԵՐԵՎԱՆ 1995 ՇԱՂԻԿ

Սա ես եմ՝ այս գրքի հերոսը։



Անունս _____ է։

Նկարագրի՛ր ինձ.

_____

_____

_____

Սա քո դասացուցակն է

Առաջին օր

Չորրորդ օր

Երկրորդ օր

Հինգերորդ օր

Երրորդ օր

Վեցերորդ օր



Հիմա գրի՛ր քո բոլոր ուսուցիչների անուններն ու ազգանունները։

Ապրե՛ս, չես մոռացել, որ անուններն ու ազգանունները մեծատառով են սկսվում:

Գրի՛ր, թե ինչպես ես դիմում ուսուցիչներիդ:

Ո՞ր դեպքում ես ներկա եղել բաժակի կոտրվելուն

ա. Բաժակը կոտրվել է: _____

բ. Բաժակը կոտրվեց: _____

Ո՞ր դեպքում ես տեսել ծառի կտրելը

ա. Բակի ծառը կտրել են: _____

բ. Բակի ծառը կտրեցին: _____

Օձը վախենում էր առյուծից ոզնուց թաքցնել չէր ուզում

Նախադասության մեջ ստորակետն այնպե՛ս նշանակիր, որ՝

Ա. Օձը վախենա առյուծից: _____

Բ. Օձը վախենա և՛ առյուծից, և՛ ոզնուց: : _____

Բառը գտի՛ր և վանդակները լրացրո՛ւ.

մարդ, որը լողում է

մարդ, որը հեծանիվ է քշում

մարդ, որը մեքենա է վարում

մարդ, որը ճամփա է գնում

մարդ, որն առաջնորդում է

մարդ, որը որս է անում

մարդ, որն անցնում է ինչ-որ տեղով

մարդ, որը գնումներ է կատարում

լ	ո	ղ	ո	ր	դ			

Առանձնացրո՛ւ այն մասը, որն ընդհանուր է բոլոր բառերի համար:
Մասնիկը գրի՛ր՝: _____

_____մասնիկը ցույց է տալիս ինչ-որ բան անող

Նախադասությունն ընդարձակի՛ր.

Արջը մրթմրթաց:

_____

_____

_____

բարձրաձայն կարդացե՛ք: Ո՞ւմ նախադասությունն է ամենաընդարձակը: Քանի՞ բառից է կազմված:

Նկարագրի՛ր քեզ:

Ա. Նկարագրի՛ր աչքերդ, ունքերդ, քիթդ, շրթունքներդ:

Բ. Ի՞նչն է ամենաշատը աչքի ընկնում դեմքիդ վրա:

Գ. Ի՞նչն է քեզ ամենաշատը դուր գալիս դեմքիդ վրա:

Դ. Ինչպիսի՞ն են մազերդ:

Ե. Ինչպիսի՞ հասակ ունես (բարձրահասա՞կ ես, ցածրահասա՞կ ես, միջահասա՞կ ես):

Զ. Ի՞նչ ես կարծում, գեղեցի՞կ ես:

Է. Ի՞նչ են կարծում ուրիշները:

Աղջիկը վազեց դեպի տատիկն ու մայրիկը

Նախադասությունն այնպե՛ս ընդարձակիր, որ՝

Ա. Աղջիկը լրսր շնից վախեցած.

Բ. Տատիկը լինի շնից վախեցած.

Գ. Մայրիկը լինի շնից վախեցած.

Գրի՛ր հարցերի պատասխանները.

Ո՞ւմ ծառերը ծաղկեցին:

_____ ծառերը ծաղկեցին:

Ինչպիսի՞ ծառերը ծաղկեցին:

_____ ծառերը ծաղկեցին:

Ծառերը ե՞րբ ծաղկեցին:

Ծառերը_____

Ծառերը որտե՞ղ ծաղկեցին:

Ծառերը_____

Ծառերը ինչպե՞ս ծաղկեցին:

Ծառերը_____

Գրածդ բառերն օգտագործելով՝ նախադասությունն ընդարձակի՛ր.

_____ծառերը_____
_____ծաղկեցին:

Նախադասությունները լրացրո՛ւ հնարավորին չափ շատ բառերով:

Անձրևը կտրվել է: Երկինքը մաքուր է: Արևը փայլում է: Օրը տաք է: Բակը գեղեցիկ է: Ծառերը ծաղկել են: Ծաղիկները բացվել են: Բակը կանաչել է: Երեխաներն աղմկում են: Տատիկները գործում են: Մայրիկները զրուցում են: Կատուն խաղում է: Շունը հաչում է: Երեկո է: Հայրիկները վերադառնում են: Իջնում է գիշերը: Բակը խաղաղվում է:

Գրի՛ր այն հրամանները, որոնք տալիս է ամռան արևը:

Արի՛ գնանք աշխարհից աշխարհման գալու: Գրի՛ր, թե ինչո՛ւ այդպես որոշեցինք:

Գրի՛ր այն երկտողը, որ ճանապարհվելուց առաջ թողեցինք սեղանին:

_____
_____
_____
_____

Եթե նախադասությունները ճիշտ դասավորես, կիմանաս, թե ինչպես է առաջացել *ցերեկը ճրագով ման գաս, չես գտնի* արտահայտությունը

Ու ասում են, նույնիսկ օրը ցերեկով ձեռքին լապտեր բռնած՝ լավ մարդ էր փնտրում:
Հիմա իմացա՞ք, թե որտեղից է գալիս աշխարհի շատ լեզուներում տարածված *ցերեկը ճրագով ման գաս՝ չես գտնի* արտահայտությունը:
Նա հրաժարվել էր աշխարհի բարիքներից ու վայելքներից և ապրում էր մի…տակառի մեջ:
Հին Հունաստանում ապրում էր մի իմաստուն ծերուկ՝ Դիոգենես անունով:

Նույն տառով նշանակի՛ր այն արտահայտությունները, որոնք կարող են իրար փոխարինել.

Ա. Վզին նստել
ջրի բերածը ջուրը տանել
չկա չարիք առանց բարիքի
ջուրը մի առվով չգնալ
չորն ու թացը ջոկել
չոփ դառնալ

Ա. Շատ նիհարել
առանց աշխատանքի ձեռքբերվածը հեշտությամբ կորչել
անմեղն ու մեղավորը ջոկել
հոգս լինել մեկի համար
ամեն վատ բան իր լավ կողմն ունի
հաշտ չլինել, իրար չհասկանալ

Գրիր հարցերի պատասխանները.

Ինչպիսի՞ նապաստակն է ցատկոտում:

_____ նապաստակն է ցատկոտում:

Նապաստակը ե՞րբ է ցատկոտում:

Նապաստակը_____ է ցատկոտում:

Նապաստակը ինչի՞ հետ է ցատկոտում:

Նապաստակը_____ է ցատկոտում:

Նապաստակը որտե՞ղ է ցատկոտում:

Նապաստակը_____է ցատկոտում:

Նապաստակը ինչպե՞ս է ցատկոտում:

Նապաստակը_____ ցատկոտում է:

Գտածդ բառերով նախադասությունն

_____ նապաստակը

_____

_____ցատկոտում է:

Կարդա՛ պատմությունները. նմանությունները գտի՛ր և կարմիր գույնով ընդգծի՛ր:

Արջն ու տղաները

Երկու ընկեր գնում էին, դեմառդեմ դուրս եկավ արջը: Մեկը ծառը բարձրացավ, թաքնվեց, մյուսը մեռած ձևացավ: Արջը հոտոտեց, տղան շունչը պահեց, լսել էր՝ մեռածներին արջը ձեռք չի տալիս: Արջը հեռացավ: Ընկերն իջավ, հարցրեց՝ արջն ի՞նչ շշնջաց:
-Ասաց՝ ճամփա մի՛ գնա ընկերոջ հետ, որը լքում է:

Արջն ու տղաները

Երկու ընկեր ճանապարհ էին գնում, մեկ էլ հանկարծ դեմառդեմ դուրս եկավ արջը: Մեկն անմիջապես ծառը բարձրացավ ու թաքնվեց, մյուսը չհասցրեց փախչել, ընկավ գետնին ու մեռած ձևացավ: Երբ արջը դունչը մոտեցրեց նրան և հոտոտեց, տղան շունչը պահեց, որովհետև լսել էր, որ մեռածներին արջը ձեռք չի տալիս:

Երբ արջը հեռացավ, ընկերն իջավ ծառից ու հարցրեց, թե արջն ի՞նչ շշնջաց նրա ականջին: Նա պատասխանեց.

-Արջն ասաց՝ սրանից հետո ճամփա մի՛ գնա այնպիսի ընկերոջ հետ, որը փորձանքի մեջ քեզ լքում է:

Այստեղ ճանապարհը բաժանվում է:
Այս ի՞նչ ցուցանակներ են:
Գրի՛ր՝ ի՞նչ է գրված.

Արի այս ճանապարհով գնանք: Գրիր, թե ինչու այդպես որոշեցինք:

Տղան մոտեցավ ընկերոջը

Նախադասությունն ընդարձակիր այնպես, որ

1. Տղան լինի ուրախ ու պայծառ ժպիտով
2. Ընկերը լինի ուրախ ու պայծառ ժպիտով
3. Մոտենալը ուրախ ու պայծառ ժպիտով

Սա փոքրերի մոլորակն է: Այստեղ իշխում են փոքրերը:

Գրի՛ր այն հրամանները, որոնք գործում են փոքրերի մոլորակում:

Աղջիկը լաց է լինում երեխայի նման նեղացել է

Նախադասության մեջ ստորակետն այնպես

1. Աղջիկը երեխայի նման լաց լինի
2. Աղջիկը երեխայի նման նեղանա

Օրագիր

Այս շաբաթվա դեպքերը գրի՛ր:

Առաջին օր

Երկրորդ օր

Երրորդ օր

Չորրորդ օր

Հինգերորդ օր

Վեցերորդ օր

Յոթերորդ օր

Վանդակների մեջ ամեն անգամ մեկ տառ ավելացրու այնպե՛ս, որ նոր բառ ստանաս:

Ստացածդ բառերը գրի՛ր:

_____

_____

_____

_____

		դ		

Բառերն այնպես տեղադրիր, որ նախադասություններ ստացվեն:

Կան, կծկվում են, կծեն, թմրեցնում են, քնում են, փաթաթվում են, մտնում են, չկա, կա, աշխուժանում են:

Աշխարհում ..... մարդ, որ օձերից չվախենա: Սակայն ..... օձերի մի թագավորություն, ուր ամեն օր առանց վախենալու ..... հարյուրավոր մարդիկ: Եվ ամենազարմանալին այն է, որ դեռ ոչ մի դեպք չի եղել, որ օձերը ……. մեկին:

Այդ վայրը Պինանգ կղզու Օձերի տաճարն է: Տաճարում տարբեր տեսակի հազարավոր օձեր ……: Նրանք ցերեկը ……տաճարի սյուներին, …… հատակին և ……..:

Պատճառն այն է, որ շոգը և տաճարում օգտագործվող անուշահոտությունները …… օձերին: Մայրամուտին, երբ այս ամենն ավարտվում է, օձերն ……..:

Ի՜նչ հետաքրքիր ու տարօրինակ ճանապարհ է: Նման չէ մյուս ճանապարհներին:

-

_____
_____
_____

Դե իհարկե, այսպիսի ճանապարհն էլ այսպիսի աշխարհ պիտի բերեր՝ տարօրինակ հայտարարությունների աշխարհը։

Գրի՛ր այդ հայտարարություններից մի քանիսը։

_____
_____
_____

Գրի՛ր մեկ բառով.

Կճղակ ունեցող-կճղ

Սմբակ ունեցող-

Թև ունեցող-

Պոչ ունեցող-

Ձայն ունեցող-

Ի՞նչ մասնիկով են նման այս բառերը։ Այդ մասնիկը գրի՛ր՝

Հիմա գրի՛ր՝ ի՞նչ է ցույց տալիս այդ մասնիկը։

_____ մասնիկը ցույց է տալիս _____:

Պատմի՛ր քո մասին (բնութագրի՛ր

Ա. Բնավորության ի՞նչ գծեր ունես (աշխատասե՞ր ես, թե՞ ծույլ, մաքրասե՞ր ես, թե՞ փնթի, կռվարա՛ր ես, թե՞ խաղաղասեր և այլն)։

Բ. Քեզ քո բնավորության ո՞ր գիծն է շատ դուր գալիս։

Գ. Բնավորությանդ ո՞ր գիծը կուզեիր փոխել։

Դ. Բնավորությանդ ո՞ր գիծն է ամենաշատը բարկացնում մարդկանց։

Ե. Ո՞ր գիծն է նրանց ամենաշատը դուր գալիս։

Զ. Բնավորության այնպիսի գիծ կա՞, որը չունես, բայց շատ կուզեիր ունենալ։

Է. Բնավորության այնպիսի գիծ կա՞, որ չունես և չէիր էլ ուզի ունենալ։

Պատմությունները կարդա՛, նրանց մեջ եղած տարբերություններն ընդգծի՛ր։

Առյուծն ու աղվեսը

Առյուծը շատ էր ծերացել, այլևս չէր կարողանում որս անել և երկար մտածելուց հետո որոշեց խորամանկել։ Նա մտավ մի մութ քարայր, շատ ծանր հիվանդ ձևացավ և ծանր ու մեծ պառկեց։ Խեղճ, միամիտ գազաններն այցելում էին, իսկ նա տեղնուտեղը մի ցատկով բռնում էր նրանց և ագահաբար խժռում։ Վերջապես խորամանկ ու խելացի աղվեսը երկար մտածելուց հետո գլխի ընկավ առյուծի խորամանկությունը, առանց վախենալու գնաց, կանգնեց քարայրից բավականին հեռու և քաղցր ձայնով հետաքրքրվեց, թե ինչպե՞ս է վեհափառ առյուծը։

Սոված և ուժասպառ առյուծը ուրախացած հարցրեց, թե ինչո՛ւ աղվեսը ներս չի մտնում։

Աղվեսն ասաց.

-Ես կմտնեի, եթե չտեսնեի, որ հետքերը մտնում են քարայր, բայց քարայրից դուրս չեն գալիս։

Առյուծն ու աղվեսը

Առյուծը ծերացել էր, չէր կարողանում որս անել, որոշեց խորամանկել: Մտավ քարայր, հիվանդ ձևացավ, պառկեց: Գազաններն այցելում էին, բռնում էր, ուտում: Աղվեսը գլխի ընկավ, գնաց, կանգնեց հեռու, հետաքրքրվեց, թե ինչպե՞ս է առյուծը: Առյուծը հարցրեց՝ ինչո՞ւ ներս չի մտնում: Աղվեսն ասաց.

-Կմտնեի, եթե չտեսնեի, որ հետքերը մտնում են, բայց դուրս չեն գալիս:

Այդ պատմություններից մեկը գրի՛ր.

Ուրախ, ծիծաղելի, խոսքերի աշխարհն է:

Աշխարհի անունը…….

Այստեղ ապրում են փոքրիկ, ծիծաղելի պատմությունները:

Զմեռ պապը տոնածառի հանդեսին նվերներ բերեց

Նախադասությանը երկար սպասված ու ցանկալի-ն այնպես ավելացրու, որ՝

Ա. Զմեռ պապը լինի երկար սպասված ու ցանկալի.

Բ. Տոնածառը լինի երկար սպասված ու ցանկալի

Գ. Հանդեսը լինի երկար սպասված ու ցանկալի

Դ. Նվերները լինեն երկար սպասված ու ցանկալի

Այս գիշեր անձրև եկավ

Նախադասությունն այնպես ձևափոխիր, որ հասկացվի՝ դու

_____

_____

Եթե բառերը կարողանաս ճիշտ ընտրել և տեղադրել, մի հետաքրքիր պատմություն կկարդաս:

Սողաց, բույն էր դրել, շարժում էր, սլանում էին, գործի դրեց, շարունակում էր, բռնեց, գալարվեց, ցած ընկավ, հարձակվեց, մոտեցրեց, շարժվում էր, հավաքվեցին, ծղրտացին, խուժեց:

Գոմի առաստաղի գերանին ծիծեռնակը ……ձագ էր հանել: Մի օր դաշտից գոմ …….. մի օձ և սկսեց դանդաղ շարժվել գերանն ի վեր, դեպի ծիծեռնակի բույնը: Ծիծեռնակ ծնողները …….. և նրանց ծվծվոցի վրա …….. հարևան ծիծեռնակները: Նրանք նետերի նման դուրս ու ներս ……. բայց օգուտ չկար՝ օձը դանդաղ …… առաջ:

Հանկարծ դրսից մի ծիծեռնակ ներս ……. և սկսեց պտտվել օձի շուրջը: Նրա կտցին մի խոշոր, գորշականաչավուն իշախառանչ կար, որը շատ թունավոր բզեզ է: Այն իր սղոցող ոտքերն ու ճանկերը օդում սպառնագին …….: Օձը …… դանդաղ մոտենալ բնին: Ծիծեռնակը հանկարծ ……օձի վրա և կտուցի բզեզը …… օձի գլխին: Միջատն իր սարսափելի ճանկերով …… օձին և իր առաջին ոտքերի սղոցները ……..: Օձը ցավից …… ու առաստաղից ……:

Ավելացրո՛ւ բառեր, որոնք պատասխանեն ինչպիսի՞ հարցին.

_____ ձյուն,

_____ գարուն,

_____տիկնիկ,

_____տնօրեն,

_____Ձմեռ պապ,

_____մայրիկ:

Սրանք պատասխանները են:

Հարցերն ինքդ գրիր:

_____

-Ո՛չ, դա ինձ դուր չի գալիս:

_____

- Այո՛, շա՛տ-շատ կուզեի:

_____

-Ի՞նչ լավ կլիներ, եթե այդպես լիներ:

_____

-Այո՛, ինձ դուր են գալիս բնավորության այդ գծերը:

_____

-Ո՛չ, ա՛յ, բնավորության այդ գծերը չեմ սիրում:

_____

-Չգիտեմ, այդ հարցի մասին դեռ չեմ մտածել:

Պատմությունները կարդա՛: Ընդարձակ տեքստից բառեր ջնջելով՝ ստացիր համառոտ տեքստը:

Նապաստակները գլխի ընկան, որ վախկոտ են, որոշեցին խեղդվել: Հավաքվեցին, մոտեցան լճափին: Գորտերը լսեցին թփթփոցը, ցատկեցին ջուրը: Նապաստակները

տեսան: Մեկն ասաց.
-Ինչո՞ւ խեղդվենք, ավելի վախկոտներն էլ կան:

Նապաստակներն ու գորտերը

Նապաստակները երկար, շատ երկար միտք անելուց հետո հանկարծ գլխի ընկան, որ իրենք ամբողջ ցեղով անչափ վախկոտ են և որոշեցին այդպես էլ չապրել, այլ գնալ, լցվել մոտակա խոր լիճն ու խեղդվել: Որոշեցին, շատ արագ հավաքվեցին, համարձակ մոտեցան ավազոտ լճափին: Լճից դուրս եկած գորտերը հենց որ լսեցին արագ մոտեցող նապաստակների ոտքերի թփթփոցը, անմիջապես, առանց վայրկյան իսկ սպասելու, ցատկեցին ջուրը, լճի ամենախոր տեղը: Այդ ամենը նապաստակները տեսան: Նրանցից մեկը, կանգնեցնելով ընկերներին, ասաց.

-Ինչո՞ւ իզուր տեղը խեղդվենք, եթե մեզնից ավելի վախկոտներն էլ կան աշխարհում:

Սա ստերի աշխարհն է: Անունը ……է:
Պարզվում է, որ բոլոր ստերը գալիս են այս աշխարհից:

Գրի՛ր նրանցից մի քանիսը:

_____

_____

Տղան խռովել էր **նախադասությանը բառեր**

_____

_____

Դո՞ւ շատ բառ ավելացրիր, թե՞ ընկերդ: Քանի բառով է շատ

_____

Բառերը գտի՛ր, վանդակները լրացրո՛ւ.

1. Օրվա այն մասը, երբ մութն ընկնում է.
2. Մարդու գլխի առջևի կողմը.
3. Երկար ականջներ ունեցող.
4. Մեր մոլորակի անունը.
5. Մեռնել-մահանալ, բույր հոտ, վախ–
6. …….. դու, նա, մենք, դուք, նրանք.



Քաղաքներն ու գյուղերը քնած էին նախադասությանը տարբեր ձևերով ավելացրո՛ւ *օրվա ծանր աշխատանքից հոգնած*-ը.

_____

_____

_____

Քանի՞ նախադասություն ստացար

_____

Բարձրաձայն կարդա՛ և որոշի՛ր, թե ամեն անգամ ինչ որոշում կայացվեց:

Ա. Ներել պետք չէ, պատժե՛լ: _____

Բ. Ներե՛լ պետք է, պատժել: _____

Նույն համարով նշանակի՛ր այն արտահայտությունները, որոնք կարող են իրար փոխարինել.

1. անհոգ, ազատ ապրել **2.** անտեղի, վտանգավոր քայլ անել **3.** շատ մտածել, նոր անել **4.** որևէ անհնար բան անել **5.** ինչ ուզում ես՝ արա 6. թուլանալ, անզորանալ։	տասը չափել, մեկ կտրել երկնքից աստղեր իջեցնել ուղտի պարը կամուրջին բռնել երկնքի թռչունի պես ապրել ուժից ընկնել ուզում ես ճաքի, ուզում ես տրաքի։

Պատմի՛ր որպես ականատես.

Արևիկը ծննդյան օրը շատ գեղեցիկ զգեստ էր նվեր ստացել։ Դա նրան տատիկն էր նվիրել։ Մայրիկը գեղեցիկ հերակալ էր նվիրել։ Հայրիկը նվիրել էր փոքրիկ ժամացույց։ Իսկ եղբայրը՝ Վահեն, համբուրել էր քույրիկի այտը ու ծնունդն այդպես էր շնորհավորել։

Պատմությունը համառոտ գրի՛ր՝ նախադասություններից բառեր հանելով.

Գրքերից ու հեռուստացույցից մեզ շատ լավ ծանոթ Աֆրիկայում մի շատ հետաքրքիր ու տարօրինակ, ոչ շատ մեծ լիճ կա։ Այդ զարմանալի ու ո՛չ սովորական լճում ոչ լողացող ձուկ կա, ո՛չ կռկռացող գորտ կա, ո՛չ էլ կանաչ ու տարբեր տեսակի խոտեր կան։ Հիմա հետաքրքրված ու զարմանալով կասեք՝ իսկ ի՞նչ կա։ Չթաքցնեմ ու ասեմ՝ կապույտ գույնի և ամենասովորական թանաք է... Հա՛, հա՛, ճիշտ եմ ասում՝ իսկական թանաք, որով բոլորն

իրենց ուզածը գրում են: Ինչքան ուզում ես՝ սրտիդ ուզածի չափ վերցրո՛ւ, խելքիդ փչածի չափ գրի՛ր, մտքովդ անցածի չափ նկարի՛ր, մայրիկն էլ հո չի ասի. «Այդ գրիչով սուտումուտ մի՛ նկարիր, թանաքը շատ շուտ կվերջանա»:

Այս ի՞նչ թարս ճանապարհ է: Ա՛յ քեզ բան:

Պատմի՛ր, թե ինչպիսին է այդ ճանապարհը

_____

_____

_____

Սրանք պատաս խաններն են:

Սրանք պատաս խաններն են:

-Շատ լավ կլիներ, եթե թույլատրվեր - Կարծում եմ, ճիշտ են անում մեծերը, որ թույլ չեն տալիս: - Կուզե՛ի սովորել այդպիսի դպրոցում: -Ո՛չ, կարծում եմ, որ լավ չէ այդպես պատժել: -Դե՛, այդպես պատժել, ոչի՛նչ, կարելի է:	

-Ոչի՞նչ, որ այդ հարցին չպատասխանեմ։	

Նախորդ բառի մեջ մեկական տառ փոխելով՝ ստացի՛ր

Դանակ բառից՝ վարազ

_____

Գարի բառից՝ մարդ

_____

Եթե նախադասությունները ճիշտ դասավորես, կիմանաս, թե ինչպես է առաջացել *իմ կույր բախտից* արտահայտությունը:

1. Իսկ աչքերը փակող թաշկինակը նրա համար էր, որ ոչ մեկին չտեսներ և արդար դատեր։
2. Այստեղից էլ առաջացել *է իմ կույր բախտից* արտահայտությունը։
3. Մյուս ձեռքի սուրը մեղավորին անխնա պատժելու համար էր։
4. Նրանք այդ կնոջը պատկերում էին աչքերը կապած, մի ձեռքին՝ կշեռք, մյուսին՝ սուր։
5. Հին հռոմեացիները Ֆորտունա անունով բախտի և արդարադատության աստվածուհի ունեին։
6. Կշեռքով նա կշռում-դատում էր մարդկանց գործերը որտեղից էլ առաջացել է բախտի նժարին դրված լինել դարձվածքը։

Մեկ բառով գրի՛ր

Գույն ունեցող-
Լույս ունեցող-
Մեղք ունեցող-
Եղջյուր ունեցող-

Գրի՛ր՝ ի՞նչ փոփոխություն կատարվեց յուրաքանչյուր բառի հետ:

Հարցազրույց վարի՛ր որևէ մեծահասակի հետ և գրի՛ առ

Որոշի՛ր, թե ինչի մասին է լինելու հարցազրույցդ:
Մտածի՛ր, թե որ հարցով ինչ ես ուզում պարզել:
Աշխատի՛ր, որ հարցերդ դիպուկ լինեն, ձգձգված չլինեն:

Պատմությունն ընդարձակի՛ր՝ նախադասություններ ավելացնելով:

-Ո՞վ է սիրում երաժշտություն:
Մի քանի աշակերտ ձեռք են բարձրացնում:
- Հիանալի՛ է: Իսկ հիմա եկե՛ք և այս դաշնամուրը փոխադրե՛ք երրորդ հարկ:

Ա. նկարագրի՛ր այն տեղը, որտեղ տեղի էր ունենում խոսակցությունը.
Բ. ո՞վ դիմեց աշակերտներին. Նկարագրի՛ր նրան.
Գ. ինչպե՞ս վերաբերվեցին այդ խոսքերին աշակերտները:

Այս ո՞ւր ընկանք: Հա՛, թարս աշխարհն է:

Պատմի՛ր թարս աշխարհի մասին.

Ընկերոջդ մասին պատմի՛ր.

1. Նրան նկարագրի՛ր:
2. Բնութագրի՛ր:

Երևակայական հարցազրույց վարի՛ր ում կամ ինչի հետ ուզում ես:

Կարդա՛ և պատասխանի՛ր հարցերին.

Ես ուզում եմ գնդակ խաղալ, քույրիկիս հետ տանը մնալ չեմ ուզում:
Ո՞ւմ հետ եմ ուզում գնդակ խաղալ:

Ես ուզում եմ գնդակ խաղալ քույրիկիս հետ, տանը մնալ չեմ ուզում:

Ո՞ւմ հետ եմ ուզում գնդակ խաղալ:

Նախադասություններն այնպե՛ս դասավորիր, որ պատմություն ստացվի:

1. Բայց գիտե՞ք, որ բույսն էլ կարող է միջատ ուտել:
2. Նրա տերևները մազմզուկներով են պատված:
3. Բռնելուց հետո ասես կուլ է տալիս նրան:
4. Գիտենք, որ միջատները տերև են ուտում:
5. Մի փոքրիկ, կարմրավուն բույս կա՝ ցողիկը:
6. Ահա այդպես է բույսը միջատ ուտում:
7. Տերևների ծայրին փայլում է փոքրիկ, թարմ մի կաթիլ:
8. Դա կպչուն նյութ է, որը բռնում է իր վրա նստած միջատին:

_____

_____

_____

_____

Այնպես պատմի՛ր, որ զգացվի՝ դու այնտեղ չես եղել

Այդ ձմեռ Հայկն առաջին անգամ եղավ կրկեսում: Նրան բոլորից շատ դուր էին գալիս կրկեսի լույսերն ու ծաղրածուն: Լույսերը սահում էին դահլիճով մեկ, իսկ Հայկը փորձում էր բռնել դրանց: Ծաղրածուի վրա բա՛րձր-բարձր կչկչում էր:

_____

_____

_____

Հրեշի ապարանքի մոտ փռված էին դաշտերն ու այգիները:
Այս նախադասությանը *կրակից խանձված ու չորացած* արտահայտությունը տարբեր ձևերով ավելացրո՛ւ:

Առակը կարդա՛

Գայլը տեսավ, որ հովիվներն իրենց վրանում գառան միս են ուտում, մոտեցավ և ասաց.
- Ի՞նչ հարայ-հրոց կբարձրացնեիք, եթե ձեր արածը ես անեի:

Այս առակից հետևություն արա՛:

Լրագրող ես, քեզ գործուղել են Հեքիաթների աշխարհ:
Հարցազրույց վարի՛ր հեքիաթների հերոսներից ում հետ ուզում ես:

Նույն համարով նշանակի՛ր այն արտահայտությունները, որոնք կարող են իրար փոխարինել

1. անր վիճակի մեջ ընկնել	մեծ կտորն ականջը թողնել
2. բարձր խոսել	լուն ուղտ դարձնել
3. մի փոքր բան մեծացնել, չափազանցնել	ձայնը գլուխը գցել
4. շատ լավ իմանալ	երկու կրակի մեջ ընկնել
5. կտոր-կտոր անել, ոչնչացնել	հինգ մատի պես իմանալ

Ի՜նչ կարճ ճամփա էր: Ո՞ւր հասանք՝ Կարճաշխա՞րհ: Ցուցանակն էլ գրված է համառոտ նախադասություններով:

Կարճ նախադասություններն են հավաքված: Նրանցից մի քանիսը գրի՛ր:

Կարճ նախադասություններին թույլ չեն տալիս Կարճաշխարհից դուրս գալ և գնալ ճանապարհորդելու Երկարաշխարհում, եթե նրանք չերկարեն: Նրանցից մի քանիսին օգնի՛ր ընդարձակվելու:

Գրի՛ր բառեր, որոնք ցույց տան տրված բառերի *ինչպիսի՞* լինելը:

_____ սառնամանիք
_____ անձրև
_____ դաս
_____ դպրոց
_____ նվեր
_____ արև

Լրագրող ես: Քեզ գործուղել են հեռավոր մոլորակներից մեկը: Տեղ ես հասել: Ա՜յ քեզ բան: Ապշած ես ու զարմանքից քարացած:

Հարցազրույց գրի՛ր տեղի բնակիչներից մեկի հետ.

_____

_____

_____

Պատմությունը կարդա՛:

Երեք եզ միասին էին դաշտում: Առյուծը նրանց հետևում էր, բայց չէր համարձակվում հարձակվել: Նա այնպես արեց, որ եզներն իրարից նեղացան և տարբեր ուղղություններով գնացին: Առյուծն առանձին-առանձին բռնեց նրանց և կերավ:

Ինչո՞ւ չէր հարձակվում առյուծը:

Մտքերից մեկն ընտրի՛ր և մեկ-երկու նախադասությամբ, պատճառաբանի՛ր:

Առյուծը չէր հարձակվում, որովհետև չէր կարողանում ընտրել՝ սկզբում որին ուտի:
Առյուծը չէր հարձակվում, որովհետև չէր ուզում խանգարել եզների խաղաղ զրույցը:
Առյուծը չէր հարձակվում, որովհետև վախենում էր, քանի որ նրանք միասին էին:

Այս բառերից ստացի՛ր տեղ ցույց տվող բառեր

հայ- Հայաստան
ռուս-
հույն-
վրացի-
հնդիկ-
չինացի-

Նկատեցի՞ր՝ որ մասնիկն ավելացրիր բառին: Գրի՛ր այդ մասնիկը:
Գրեցի՞ր, լա՛վ: Փորձիր գրել՝ ի՞նչ է ցույց տալիս այդ մասնիկը:
ցույց է տալիս _____:

Համապատասխան բառը տեղադրի՛ր.

Մեր գյուղը չորս կողմից _____ լեռներով:

Կշրջապատվի, շրջապատվելու է, շրջապատված է, շրջապատվեց, շրջապատվում է:

Օրագիր
Այս շաբաթվա դեպքերը գրի՛ր:

Առաջին օր

Երկրորդ օր

Երրորդ օր

Չորրորդ օր

Հինգերորդ օր

Վեցերորդ օր

Յոթերորդ օր

Պատմությունն ընդարձակիր՝ նախադասություններ ավելացնելով:

Ծնողները տղային թմբուկ նվիրեցին: Մի քանի օր հարևանը համբերությամբ լսեց թմբուկի ձայնը: Բայց էլ չդիմացավ, գրպանի դանակ գնեց, տվեց տղային և ասաց.

- Չե՞ս ուզում իմանալ՝ թմբուկի մեջ ինչ կա:

Ծնողներն ինչո՞ւ որոշեցին տղային թմբուկ նվիրել:
Ի՞նչ էր անում տղան այդ թմբուկը:
Ո՞վ էր նրանց հարևանը և ինչպիսի՞ն էր նա:
Ի՞նչ պատասխանեց տղան հարևանին:

_____

_____

_____

_____

Հարցերը փորձիր հիշել և գրել.

- Չախչախ

- Չախչախ թագավորինը:

- Չախչախ թագավորինը:

- Չախչախ թագավորինը:

Հեքիաթի անունը գրի՛ր:
Հեքիաթի անունը մեծատառով սկսեցիր և չակերտներո՞ւմ գրեցիր: Լավ է:

Գրի՛ր այս քաղաքի ցուցանակը

Երկա՛ր, երկա՛ր ճանապարհ անցանք: Մտել ենք երկա՛ր, երկա՛ր փողոցներով քաղաք: Երկա՛ր, երկա՛ր փնտրեցինք որևէ ցուցանակ և այս երկա՛ր, երկա՛ր նախադասություններով գրված ցուցանակը գտանք: Պարզ է, ընդարձակ նախադասությունների քաղաքն ենք ընկել:

_____

_____

Իսկ սրանք այս աշխարհի երկա՛ր-բարակ բնակիչներն են՝ երկա՛ր- երկա՛ր նախադասությունները:
Գրի՛ր դրանք:

_____

_____

_____

Համառոտի՛ր գրածդ նախադասությունները:

_____

_____

Այլ բառով կամ բառերով փորձի՛ր բացատրել.

Ցրտել
Զարդ ու փշուր անել
Չափից դուրս
Սիրտը վախ ընկնել
Ճանապարհ ընկնել
Վնաս չունի
Զայն-ծպտուն չհանել
Կարոտը քաշել

Պատմությունն ընդարձակիր՝ նախադասություններն ընդարձակելով և նոր նախադասություններ ավելացնելով:

Մի որսորդ առյուծի հետք էր փնտրում: Նա փայտահատին հարցրեց, թե չի՞ տեսել առյուծի հետքը կամ որջը: Փայտահատը պատասխանեց.

- Ես քեզ հենց իրեն՝ առյուծին ցույց կտամ:

Որսորդը վախից գունատվեց և ատամները չխկչխկացնելով շշնջաց.

-Չէ, ինձ միայն հետքն է պետք, ոչ թե առյուծը:

_____

_____

_____

_____

Հարցերն ինքդ գրիր.

Մի հին ավերակի մոտից անցնելիս հիմարը ձայն է տալիս.
-Ա՜մոզի, արի, հե՜յ…
Ավերակի արձագանքը կրկնում է
-Հե՜յ…
Հիմարը կանգնում է, հարցնում.

-Հա՜…

-Ե՜ս…

-Տա՜ս…

-Չէ՜…

-Արի՜…

Եթե նախադասությունները ճիշտ դասավորես, կկվի մասին հետաքրքիր պատմություն կկարդաս:

1. [illegible]
2. Կկուն բույն չի հյուսում:
3. Նա շատակեր է, ուտում է հինգ թռչնի չափ:
4. Մայրը հեռանում է, իսկ կկվի ձագը, հենց որ դուրս է գալիս ձվից, անմիջապես սկսում է դուրս գլորել այդ բնում եղած մյուս ձվերը:

5. Իր ձուն ածում է ուրիշ թռչնի բնում և ոչ թուխս է նստում, ոչ էլ հետո կերակրում իր ձագուկին:
6. Հաճախ դուրս է հրում նաև մյուս ձագուկներին, որպեսզի իրեն շատ սնունդ բաժին ընկնի:
7. Հինգ օր հետո հինգ անգամ մեծանում է և շուտով բնում չի տեղավորվում:

_____

_____

_____

_____

Բարձրաձայն կարդա՛ և հարցերին պատասխանի՛ր.

Փոքրիկ, հաչան շունը կծում է:
Ինչպիսի՞ շունն է կծում:

Փոքրիկ, հաչան շունը կծո՞ւմ է:
Ինչպիսի՞ շունն է կծում:

Մեկ բառով գրիր.

Ոչ այնքան հաստ-հաստավուն
Ոչ այնքան դեղին-դեղնավուն
Ոչ այնքան կարմիր-
Ոչ այնքան կապույտ-
Ոչ այնքան կանաչ-
Ոչ այնքան սպիտակ-

Ի՞նչ մասնիկ ավելացրիր, այդ մասնիկը գրիր՝
Մասնիկը ցույց է տալիս _____ լինելը:

Մի անգամ գ[illegible] հին
հանդիպեց ա[illegible]
- Դու որսս ա[illegible]

Պատմությունն ընդարձակի՛ր՝ բառեր և նախադասություններ ավելացնելով:

Առյուծը ծիծաղելով պատասխանեց.
-Իսկ դու, ի՞նչ է, ազնվորեն նվե՞ր էիր ստացել քո բարեկամից:

_____

_____

Փորձիր այլ բառով կամ բառերով բացատրել.

Ճանապարհ դնել-
Հավի խելք ունենալ-
Ասեղների վրա լինել-
Լեզուն կապ ընկնել-
Ջեմ ու չում անել-
Իրար հետ շուն ու կատու լինել-

Բառերը գտի՛ր և գրի՛ր

1. Գիշատիչ-գազան, որը ձմռանը քուն է մտնում:
2. Կենդանի, որը ո՛չ թռչուն է, ո՛չ էլ մուկ:
3. Հոտավետ, գեղեցիկ ծաղիկ, որը փշոտ է:
4. Պապիկ-տատիկ, հայր-մայր, տղա-
5. Երկար-կարճ, ծանր-թեթև, ցածր-
6. Մեկ կամ երկու սապատ ունեցող խոշորամարմին որոճող կենդանի:
7. Ծառի պտուղ, որը կարելի է նաև հում ուտել:

Ուշադրություն դարձրո՛ւ գրածդ բառերի գրությանը: Այդ բառերն արտասանի՛ր: Տարբերություն կա՞ գրության և արտասանության միջև:

Եթե նախադասությունների մասերը ճիշտ միացնես, քեզ ծանոթ հեքիաթից մի հատված կարդաս:

Սախրոտը ուզում է փախչել տուն,

Թագավորի տղան ետևից է ընկնում՝ տեսնելու,
Մոխրոտը վազում ընկնում է իրենց տան ետևի պարտեզը,
Սկյուռի նման ճարպիկ բարձրաձայնում է ծառը
Թագավորի տղան մտնում է պարտեզ,

Ու ճյուղերի արանքում կորչում:
Թե աղջիկն ո՞ւմ տունն է մտնում:
Բայց չի գտնում աղջկան:
Երբ տեսնում է, որ մութն ընկնում է:
Որտեղ մի տանձենի է լինում՝ լիքը հասած պտուղներով:

_____

_____

_____

Գրի՛ր հեքիաթի անունը:
Չակերտները չմոռացա՞ր դնել: Լա՛վ է:

Հարցերն ինքդ գրի՛ր

-Բարի՛ օր, ախպերացու:
-Աստծո՛ւ բարին:

_____

-Անցկացավ:

_____

-Եղ ու բրինձ:

_____

-Բավականին ժամանակ կլինի:

_____

-Որտեղի՞ց կհասնես: Մինչև քո ձին չորս ոտքը փոխի՝ մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, չո՛ր, նա երկու ոտքով՝ մեկ-երկու, մեկ-երկու, շուտ-շուտ կգնա, անց կկենա:

_____

-Ի՞նչ պետք է անես. Ուզում ես՝ ձիդ թող ինձ մոտ, դու էլ նրա պես ոտքով վազի, գուցե հասնես:

Հարցական նշանները դրեցի՞ր: Լավ է:

Գրի՛ր բառեր, որոնք ցույց տան տրված բառերի ինչպիսի լինելը:

_____ծծաղիկ
_____քամի
_____ծառ
_____տոնածառ
_____ձմեռ
_____աղջիկ
_____տղա

Պատմությունը կարդա՛

Գայլն ու հովիվը

Հովվի ամբողջ հոտը հիվանդությունից կոտորվեց: Գայլն իմացավ ու եկավ հովվին մխիթարելու:

- Մի՞թե դա ճիշտ է, – հարցրեց հովվին, – աստվա՛ծ իմ, ի՛նչ մեծ փորձանք է, ի՛նչ սիրունիկ, ինչ թմբլիկ ոչխարներ էին...

Եվ գայլն սկսեց հոնգուր-հոնգուր լաց լինել:

- Շնորհակալ եմ, գայլ եղբայր, – հառաչեց հովիվը, – տեսնում եմ՝ բարի ես ու սրտացավ:

- Ճիշտ որ՝ սրտացավ, – ասաց շունը, – փորձանքը մերն է, բայց տես, որ նրա սիրտն է ցավում:

Ինչո՞ւ էր լաց լինում գայլը:

Պատասխանդ պատճառաբանի՛ր մեկ-երկու նախադասությամբ:

Մեկ բառով գրի՛ր.

Քար ունեցող-քարոտ
Կեղտ ունեցող-կեղտոտ
Մուր ունեցող-
Յուղ ունեցող-
Ժանգ ունեցող-
Փուշ ունեցող-
Ցեխ ունեցող-

Ինչ մասնիկ ավելացրիր, այդ մասնիկը գրի՛ր:
_____

Եթե նախադասությունների մասերը ճիշտ միացնես, քեզ ծանոթ հեքիաթից մի հատված կկարդաս.

Լինում է, չի լինում, մի փոքրիկ, սիրուն աղջիկ է լինում,
Չնայած բոլորն էլ նրան շատ են սիրում,
Մի անգամ տատը մի կարմիր գլխարկ է նվիրում աղջկան,
Էս կարմիր գլխարկն էնքան է դուր գալիս աղջկան,
Որ կարմիր շորեր էլ հագնում է,

Այդ է պատճառը,
ոտից գլուխ կարմրում է:
բայց բոլորից շատ տատիկն է սիրում:
որ էլ չի ուզում գլխին ուրիշ գլխարկ դնել, բացի կարմրից:
որ բոլորը նրան Կարմրիկ են կանչում:
որը նրան շատ է սազում:
որին բոլորը շատ սիրում են:

Ո՞ր հեքիաթից է վերցված հատվածը, գրի՛ր: _____
Չակերտները չե՞ս մոռացել դնել: Շատ լավ է:

Բարձրաձայն կարդա՛ և հարցերին պատասխանի՛ր.

Անուշի՛կ, փոքրիկ քույրիկիս համար եմ գնել տիկնիկը:
Ինչպիսի՞ քույրիկիս համար եմ գնել տիկնիկը:
Անուշիկ, փոքրիկ քույրիկիս համար եմ գնել տիկնիկը:

Ինչպիսի՞ քույրիկիս համար եմ գնել տիկնիկը:

Պատմությունը կարդա՛:

Երեք եզ միասին էին դաշտում: Առյուծը նրանց հետևում էր, բայց չէր համարձակվում հարձակվել: Նա այնպես արեց, որ եզներն իրարից նեղացան ու տարբեր ուղղություններով գնացին: Առյուծն առանձին-առանձին բռնեց նրանց ու կերավ:
Ինչո՞ւ չէր հարձակվում առյուծը:
Մտքերից մեկն ընտրի՛ր ու մեկ-երկու նախադասությամբ պատճառաբանի՛ր:
Առյուծը չէր հարձակվում, որովհետև չէր կարողանում ընտրել՝ սկզբում որին ուտին:
Առյուծը չէր հարձակվում, որովհետև չէր ուզում խանգարել եզների խաղաղ զրույցը:
Առյուծը չէր հարձակվում, որովհետև վախենում էր՝ նրանք միասին էին:
_____
_____
_____

Այլ բառով կամ բառերով բացատրի՛ր.

Ման գալ-
Հոգին ուտել-
Խելքից պակաս-
Խելքը գլուխը հավաքել-
Գլխի ընկնել-
Խոսքը մեր մեջ մնա-
Սիրտը փորն ընկնել-
Գլուխ կոտրել-

Բառերից մեկն ընտրի՛ր և նախադասությունը լրացրո՛ւ.

Ուտել, խժռել

Փոքրիկը հանգստացած սկսեց կաթ……

Երևում էր, որ մարդը բավականին ժամանակ հացի երես չէր տեսել. Վրա ընկավ ուտելիքին և մեկը մյուսի ետևից արագ …….. ամբողջը:

Ինչո՞ւ այդ բառն ընտրեցիր, պատճառաբանի՛ր:

Եթե նախադասությունների մասերը ճիշտ տեղադրես, կիմանաս, թե ինչպես է առաջացել *կենգուրու* անունը.

Եվրոպացիները տեսան չտեսնված ու չլսված մի կենդանի,
Նա մի զույգ երկար, մի զույգ կարճ ոտքեր ուներ,
Զարմացած եվրոպացիները հարցրին տեղի բնակիչներին,
Բնակիչները չհասկացան նրանց և ասացին իրենց լեզվով՝ կեն-գու-
րու, եվրոպացիները կարծեցին,
Այդպես էլ կենգուրուն կենդանուն կպավ-մնաց, որպես անուն:

թե դա ի՞նչ կենդանի է:
այսինքն՝ ես քեզ չեմ հասկանում:
երբ առաջին անգամ ոտք դրին Ավստրալիա:
թե նրանք կենդանու անունն են տալիս՝ կենգուրու:
իսկ փորին՝ մի պարկ ու մեջն էլ իր ձագը:

Պատմությունը կարդա՛.

Երկար ժամանակ հանելուկ էր մնացել այն բանը, թե ինչու են փոքրիկ ձկները մտնում գրենլանդական շնաձկների բերանները: Վերջերս պարզեցին, որ այդ շնաձկների աչքերը լույս են տալիս: Դրանով էլ նրանք խեղճ ձկնիկներին հրապուրում են:

Պատմի՛ր այն մասին, թե ինչու է փոքրիկ ձուկը մտնում շնաձկան բերանը:

Երկար ժամանակ հանելուկ էր մնացել այն բանը, թե ինչո՞ւ է փոքրիկ ձուկը մտնում գրենլանդական…….
Վերջերս պարզեցին, որ այդ…….աչքերը լույս են տալիս: Դրանով էլ…….խեղճ ……..հրապուրում……..:

Ստացված պատմությունը կարդա՛: Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին, գրի՛ր, օրինակ՝ է-են, ձուկը-ձկները:

_____

_____

Բառը գտի՛ր և վանդակները լրացո՛ւ.

1. առարկա, որով կողպեք, փականք են բաց անում
2. աքլոր-աքաղաղ, լուսամուտ-պատուհան, արցունք–
3. գեղեցիկ-սիրուն, սպիտակ-ճերմակ, կոտոշ-
4. առավոտ-լուսաբաց, մեծ-խոշոր, բախտավոր–
5. թուփ՝ գեղեցիկ ու անուշաբույր ծաղիկներով, յասաման
6. միշտ կանաչ, փշատերև ծառ, որը նաև տոնածառ է դառնում

Գրածդ բառերը ստուգի՛ր բառարանով:

Մեկ բառով գրի՛ր.

Զվարթ ձայն ունեցող-
Լրագիր վաճառող-
Զվարճություն սիրող-
Գիրք վաճառող-
Ժպտուն երես ունեցող-
Հաց վաճառող-
Միս վաճառող-

Կարդա՛ բարձրաձայն: Ո՞րն է տարբերությունը:

Փոքրի՛կ, եղբայրդ տա՞նն է:

Փոքրիկ եղբայրդ տա՞նն է:

Եթե նախադասության մասերը ճիշտ միացնես, մի հետաքրքիր պատմություն կկարդաս:

Մեզ պատմություն է հասել մի կղզու մասին,
Այդ կղզում գտնվել է ռազմատենչ թագավորների մեծ ու ահեղ տերությունը
Այդ թագավորի անունը Ատլանտ է եղել,
Բայց կղզուն դժբախտություն է պատահել,
Հողն սկսել է ցնցվել, լեռները ծուխ ու կրակ են ժայթքել, երկրաշարժ է եղել,
Չքացել են բնակիչները՝ ատլանտները, չքացել են հզոր թագավորները, չքացել է հրաշք կղզին՝ Ատլանտիդան,
որովհետև աստվածները բարկացել են ատլանտների վրա:
Իսկ այս պատմությունը Ատլանտայի մասին մնացել է,
և այդ թագավորներից ամենաավագը տիրել է ամբողջ կղզուն:
և Ատլանտի օրոք չքնաղ կղզին ծաղկել է ու ծաղկել:
որը եղել է մեծ, հարուստ և գեղեցիկ:
և այդ երկրաշարժից մի օր ու գիշերում Ատլանտիդան սուզվել է ծովի տակ:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Գրի՛ր այն բառերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի՞ն են.

_____երկինք
_____ժայռ
_____ծով

_____դաշտ
_____մրջյուն

Բառերից մեկն ընտրի՛ր և նախադասությունը լրացրո՛ւ.

Նա ալեխառն մազերով, մեղմ ու խաղաղ
ժպիտով…….
Դա մի զզզված մազերով, ծխամորճը ատամների արանքում բռնած և անընդհատ հայհոյող մի……..մարդ էր:

Գիրուկ, հաստափոր
Ընտրությունդ պատճառաբանի՛ր:

Մեկ բառով գրի՛ր

Բնակվելու տեղ- բնակարան
ննջելու տեղ-
Նստելու տեղ
Վառելու տեղ-
Ճաշելու տեղ-
Սրճելու տեղ-
Դատելու տեղ-
Խորհուրդ անելու տեղ-

Ի՞նչ մասնիկ ավելացրիր, այդ մասնիկը գրի՛ր: Այդ մասնիկն ի՞նչ է ցույց տալիս:
_____մասնիկը_____ցույց է տալիս:

Այս ի՛նչ խառնաշփոթ է այստեղ.
իրիկուն, անսպասելի, լուսաբաց, հիանալի, երեկո, արշալույս, սքանչելի, իրիկնադեմ, հրաշալի, մթնշաղ, լուսադեմ, լուսածագ, անհավանական, իրիկնաժամ, արևածագ, իրիկնամուտ, վերջալույս, արևամուտ, առավոտ:

Տեղավորի՛ր նրանց երեք խմբում:

_____
_____
_____
_____
_____

Բառերն ընտրի՛ր և նախադասությունները լրացրո՛ւ

Պատուհանի գոգին նստած աղջիկը մեղմ ձայնով ……էր: Փոքրիկ աղջնակը……էր մոր գրկում:
ծլվլում էր, երգում էր
Ինչո՞ւ այդ ընտրությունն արեցիր:

Մեկ բառով գրի՛ր

մարդ, որը գյուղում է ապրում-
մարդ, որը քաղաքում է ապրում-
մարդ, որը Եվրոպայում է ապրում-
մարդ, որը Ֆրանսիայում է ապրում-

Ի՞նչ մասնիկներ ավելացրիր: Այդ մասնիկները գրի՛ր:

_____մասնիկները ցույց են տալիս ինչ-որ տեղ ապրող_____:

Մի քանի բառեր մանրամասն բացատրի՛ր՝ առանց այդ բառի անունը տալու, և տո՛ւր թող ընկերդ գտնի բառը:

_____
_____

Պատմությունն ընդարձակի՛ր՝ նախադասություններ ավելացնելով:

Մի փոքրիկ աղջիկ մայրիկի հետ խանութ է գալիս: նա պետք է տիկնիկ ընտրեր:
Վաճառողն ասում է աղջկան.
- Այս տիկնիկը վերցրո՛ւ. նա կարող է աչքերը բացել ու փակել, լաց լինել, կանչել ու երգել:
- Ո՛չ, ո՛չ,-արագ ասում է աղջիկը,-ես արդեն մի այդպիսի քույրիկ ունեմ, ես տիկնիկ եմ ուզում:

ա. Նկարագրի՛ր այն փողոցը, որտեղ գտնվում է խաղալիքների փողոցը:
բ. Նկարագրի՛ր խաղալիքների խանութը
գ. Նկարագրի՛ր վաճառողին
դ. Մանրամասնորեն նկարագրի՛ր այն տիկնիկը, որն առաջարկեց վաճառողը:
ե. Աղջկա խոսքերից հետո ի՞նչ արեցին կամ ասացին մայրիկն ու վաճառողը:

Ընդգծված բացակապակցությունները փոխարինի՛ր տրվածով.

Հուրի-փերի
օրերից մի օ
Աշխարհի չ
Ժուկով-ժամանակով
էնքան սիրուն, որ արևին ասում է՝ դու դուրս մի՛ արի, ես դուրս գամ
սիրտդ ի՞նչ է ուզում
առանց երկար-բարակ մտածելու

Մի ժամանակ մեր աշխարհում մի վաճառական է լինում: Վաճառականը մի **շատ** գեղեցիկ աղջիկ է ունենում, **հեքիաթային գեղեցկության տեր**: Հայրը **շատ-շատ** է սիրում աղջկան:
Մի օր՝ օտարության գնալիս, հայրը հարցնում է.
- **Ի՞նչ ես ուզում**, որ բերեմ քեզ համար:
Աղջիկն էլ **երկար չմտածեց**, թե՝ եղեմական ծաղիկ եմ ուզում:

Առակները կարդա՛: Նմանություններն ընդգծի՛ր կարմիր գույնով, տարբերությունները՝ կանաչ:

Շունն առյուծին տեսավ, նետվեց դեպի նա: Առյուծը շրջվեց ու մռնչաց: Շունը փախավ: Աղվեսն ասաց.
- Առյուծի ետևից ես ընկել, մռնչյունից անգամ վախենում ես:

Որսի շունը որս անելիս տեսավ իր ուժն ու մեծությունը գիտակցող, հանգիստ քայլող առյուծին ու իր հաջող որսով ոգևորված, առանց երկար-բարակ մտածելու նետվեց դեպի նա: Առյուծը արհամարհանքով լի հայացքով շրջվեց ու ահարկու մռնչաց: Հանկարծակիի եկած ու սաստիկ վախեցած շունը, իսկույն շրջվելով, հեռու փախավ: Այս ամենին ուշադիր հետևող աղվեսը, մոտենալով շանը, ասաց.
-Ա՛յ չորգլուխ պարծենկոտ, առյուծի ետևից ես ընկել՝ ցանկանալով որսալ նրան, բայց նրա մռնչյունից անգամ վախենում ես:

Երկաթից շինված-երկաթյա
Արծաթից շինված-

Նախադասությունը շարունակի՛ր.

Ծտի՞ ոտքը փուշ մտավ, թե՞
Ծտի ո՞տքը փուշ մտավ, թե՞
Ծտի ոտքը փո՞ւշ մտավ, թե՞
Ծտի ոտքը փո՞ւշ մտավ, թե

Հեռագրերի աշխարհն է: Տե՛ս, ինչքա՛ն հեռագրեր կան: Գրի՛ր դրանցից մի քանիսը:

_____

_____

Այստեղից կարելի է նաև հեռագիր ուղարկել: Գրի՛ր հեռագիր:

_____

_____

Նախադասությունները լրացո՛ւ հարցերին պատասխանող բառերով

Գայլն ու շունը

(Ինչպիսի՞) ……գայլը տեսավ շղթայակապ շանը ու հարցրեց.
- Այդ ո՞վ է քեզ (ինչպե՞ս)……շղթայել ու այդպես գիրացել:
Շունը (ինչպե՞ս)……..պատասխանեց.
-(Ինչպիսի՞)……մարդը:
_Չէ՛, սրտովս չէ այդպիսի բախտը: Ավելի լավ է (ինչպե՞ս)……մնամ, քան թե այդ (ինչպիսի՞)……..շղթան վզիս:

Գիտե՞ք, որ…

Կրիաների երկու հարյուր տասը տեսակ է հայտնի: Կան փղի չափ մեծ կրիաներ, որոնց քաշը հասնում է **չորս հարյուր** կիլոգրամի:
Աշխարհի ամենախոշոր կենդանին կապույտ կետն է: Նրա երկարությունը **երեսուներեք** մետր է, քաշը՝ մինչև **հարյուր հիսուն** տոննա: Նա հիսուն փղից ծանր է : Կետի նորածին ձագն ունենում է վեցից ութ մետր երկարություն և ամեն կերակրման ժամանակ ոտում է **հարյուր** լիտր կաթ:

Ուշադրություն դարձրո՛ւ ընդգծված բառերի գրությանը:

Օրագիր

Այս շաբաթվա դեպքերը գրի՛ր:

Առաջին օր

Երկրորդ օր

Երրորդ օր

Չորրորդ օր

Հինգերորդ օր

Վեցերորդ օր

Յոթերորդ օր

Գրի՛ր ընդգծված բառերին իմաստով հակառակ բառեր:

Մի եղբայրը օր-օրի **հարստանում էր,** իսկ մյուսը …
Թագավորը մեծ որդուն թողեց **ամեն ինչ,** իսկ մյուսին՝…
Այսօր ձու գողացողը……. ձի կգողանա:
Արևն ամպերի ետևից **երևում էր**, մեկ՝….
Շողոքորթող կատուն օրեցօր **չաղանում էր**, իսկ շունը՝….
Այստեղ շատ **խոնավ է,** …… տեղում նստի՛ր:

Պատմությունը կարդա՛.

Ծիծեռնակներ

Ծիծեռնակներին կարելի է հանդիպել թե՛ քաղաքում, թե՛ գյուղում: Նրանք անդադար աշխատում են՝ օդում միջատներ են որսում: Ասում են, երբ ծիծեռնակները բարձր են թռչում, լավ եղանակ է լինելու, ցածր են թռչում՝ անձրև է գալու: Դա շատ ճիշտ է, սակայն կապվում է ոչ թե ծիծեռնակների, այլ այն միջատների հետ, որոնց ծիծեռնակները որսում են: Անձրևից առաջ, երբ օդն ավելի է խոնավանում, միջատների թևիկներն ուռչում են և, ծանրանալով, նրանց ներքև են քաշում:
Ծիծեռնակներն այդ պատճառով են ցածր թռչում:

Ծիծեռնակ

Ծիծեռնակին կարելի է հանդիպել թե՛ քաղաքում, թե՛ գյուղում: …….. անդադար աշխատում …..՝օդում միջատներ ……որսում: Ասում են, երբ ……բարձր ……թռչում, լավ եղանակ է լինելու, ցածր……. թռչում՝ անձրև է գալու: Դա շատ ճիշտ է, սակայն կապվում է ոչ թե……, այլ այն միջատների հետ, որոնց ……. որսում ….: Անձրևից առաջ, երբ օդն ավելի է խոնավանում, միջատների թևիկներն ուռչում են և, ծանրանալով, նրանց ներքև են քաշում:
……. այդ պատճառով են ցածր թռչում:

Կատարված փոփոխությունները գրի՛ր

_____
_____
_____
_____
_____

Այս փողոցում ապրում են թարս ցանկությունները:

Այնպես ուզում եմ, որ մայրիկս ինձ համար երբեք պաղպաղակ չգնի:
Այնպես ուզում եմ, որ ……
Այնպես ուզում եմ, որ ……
Այնպես ուզում եմ, որ ……
Այնպես ուզում եմ, որ ……

Այնպես չեմ ուզում, որ ինձ գեղեցիկ խաղալիք նվիրեն:
Այնպես չեմ ուզում, որ……
Այնպես չեմ ուզում, որ……
Այնպես չեմ ուզում, որ……
Այնպես չեմ ուզում, որ……

Մեկ բառով գրի՛ր

Երկաթից շինված-երկաթյա
Արծաթից շինված-
Ոսկուց շինված-

Պղնձից շինված
Փայտից շինված
Բրդից պատրաստված-

Ո՞ր մասնիկն ավելացրիր:
Ի՞նչ է ցույց տալիս այդ մասնիկը: …….
……մասնիկը ցույց է տալիս այն նյութը, որից……..է առարկան:

Նայի՛ր ընդգծված բառերին և *կռվել* բառը անհրաժեշտ ձևով տեղադրի՛ր.

Եթե երկու շուն….., ճամփորդի գործը *հաջողվում է:*
Երկու շուն ….., ճամփորդի գործը *հաջողվեց:*
Եթե երկու շուն ….., ճամփորդի գործը *կհաջողվի:*

Թաքնված բառերը գտիր: Գրիր՝ ի՞նչ փոփոխություններ են կատարվել այդ բառերի հետ:

Այսպես՝ սրտոտ, սրտամոտ, սրտաբաց- սիրտ բառի –ի-ն դարձել է ը, որը չի գրվել:
Լրաբեր, լրագիր, լրագրող, լրագրություն, լրագրավաճառ

Նվիրել, նվիրատու, նվիրական, նվիրված, նվիրվել

Նրբազգաց, նրբամարմին, նրբանկատ, նրբորեն

Գունավոր, գունազարդ, գունավորել, գունատ, գունաթափ

Բարձրաձայն կարդա՛ և հարցին պատասխանի՛ր.

Շունը վազեց Շուշանի փոքր աղջկա ետևից:
Աղջկա անունն ի՞նչ էր:

Շունը վազեց Շուշանի՝ փոքր աղջկա ետևից:
Աղջկա անունն ի՞նչ էր:

Ինչո՞ւ տարբեր պատասխաններ ստացվեցին:

Այստեղ ամեն ինչ թարս է

Արևը նույնքան սառն է, ինչքան սառույցը:
Ոզնին նույնքան փափուկ է, ինչքան բամբակը:
Գրի՛ր մի քանիսը:

_____

_____

_____

Կարդա՛:

Շատ պատմություններ կան օձի մասին: Ասում են՝ օձը կախարդիչ հայացք ունի, որից քարանում են կենդանիները: Բանն այն է, որ օձի աչքերը կոպեր չունեն, ծածկված են թափանցիկ թաղանթով: Այդ պատճառով էլ նայում է անթարթ, անընդհատ: Ժամանակ առ ժամանակ օձը մաշկափոխվում է, դուրս է գալիս հին մաշկից: Բայց այդ կիսաթափանցիկ մաշկը չպետք է շփոթել օձի կաշվի հետ: Կաշին մնում է և շատ ավելի պայծառ է փայլում: Մաշկափոխությունից հետո օձն արտակարգ գեղեցկանում է:

Փորձիր լրացնել.

Շատ պատմություններ կան օձերի մասին:

Ասում են՝ օձերը կախարդիչ հայացք ունեն, որից քարանում .... կենդանիները: Բանն այն է, որ ..... աչքերը կոպեր չունեն, ծածկված են թափանցիկ թաղանթով: Այդ պատճառով էլ նայում ..... անթարթ, անընդհատ: Ժամանակ առ ժամանակ ..... մաշկափոխվում... , դուրս... գալիս հին մաշկից: Բայց այդ կիսաթափանցիկ մաշկը չպետք է շփոթել ..... կաշվի հետ: Կաշին մնում է և շատ ավելի պայծառ է փայլում: Մաշկափոխությունից հետո..... արտակարգ գեղեցկանում.....:

Գրիր այն փոփոխությունները, որ կատարվեցին.
Օրինակ՝ օձ-օձեր, ունի-ունեն

Թաքնված բառերը գտիր:
Գրիր՝ ի՞նչ փոփոխություններ են կատարվել այդ բառերի հետ:

Հարցասիրություն, սիրահարվել, ինքնասիրահարված, մարդասիրություն

Մոխրացնել, մոխրագույն, մոխրոտ, մոխրապատ, մոխրոտիկ

Լուսատիտիկ, լուսավորել, լուսամուտ, լուսաբաց, լուսաշող

Բարձրաձայն կարդա՛ և պատասխանի՛ր հարցին

Ես բարկացել էի Հայկի չարաճճի տղայի վրա:
Ո՞ւմ վրա էի բարկացել:
Ես բարկացել էի Հայկի՝ չարաճճի տղայի վրա:
Ո՞ւմ վրա էի բարկացել:
Գրի՛ր՝ ինչո՞ւ տարբեր պատասխաններ ստացվեցին:

Հարցազրույց վարի՛ր որևէ մեծահասակի հետ:
Այդ հարցազրույցը գրի՛ առ:

Որոշի՛ր, թե ինչի՞ մասին է լինելու հարցազրույցը:
Մտածի՛ր, թե ո՞ր հարցով ի՞նչ ես ուզում պարզել:
Աշխատի՛ր, որ հարցերդ դիպուկ լինեն, ձգձգված չլինեն:

Ընդգծված բառերին նայի՛ր և բաց թողած բառերը համապատասխան ձևով տեղադրի՛ր.

Օրինակ՝ Գայլի հետ գառ է ուտում, տիրոջ հետ սուգ է անում: (ուտել)

Իր համար….. , ուրիշի համար երազ է տեսնում: (քնել)
Լավ հնձվորը դաշտում էլ……, սարում էլ է հնձում: (հնձել)
Ուրիշի վրա շուն …... մեզ վրա կատու է հաչում: (հաչել)
Իր աչքի գերանը……, ուրիշի աչքի մազը տեսնում է: (չտեսնել)
Ինչ աղբյուրից որ ջուր …….. էն աղբյուրին քար չեն գցում: (խմել)

Ա՛յ քեզ թարս աշխարհ

Այս փողոցում ապրում են թարս հրամանները:
Ուտելիս անպայման խոսի՛ր:
Հաց ուտելիս ձեռքերդ մի՛ լվանա:
Ուրիշ թարս հրամաններ գրի՛ր:

Պատմությունը կարդա՛

Ուղտին անապատի նավ են ասում: Այդ դիմացկուն կենդանին լավ հարմարվել է անապատային կյանքին: Նրա թաթերը լայն են, և նա հեշտությամբ է շարժվում ավազի վրայով: Թաթերին հաստ կոշտուկներ ունի, որոնք պաշտպանում են ուղտին անապատի արևից շիկացած ավազից: Խիտ ու երկար բուրդն օգնում է նրան դիմանալու ցերեկվա շոգին ու գիշերվա ցրտին: Ուղտը բավարարվում է փշոտ թփեր ուտելով: Այդ համեստ կերից էլ ուղտի սապատներում ճարպի պաշար է կուտակվում: Այդ ճարպի պաշարն է օգնում նրան՝ անհրաժեշտության դեպքում մի քանի օր ոչինչ չուտել և դիմանալ: Ուղտը նաև քիչ ջուր է խմում: Բայց միանգամից ընդունակ է խմելու մինչև հիսունյոթ լիտր ջուր: Ուղտը կարողանում է նաև աղի ջուր խմել: Նա ապրում է երեսունհինգից-քառասուն տարի:

Հիմա գրի՛ր այսպես.

Ուղտերին անապատի նավ են ասում: Այդ դիմացկուն ……. լավ հարմարվել …… անապատային կյանքին: ….. թաթերը լայն են, և …… հեշտությամբ ……շարժվում ավազի վրայով: Թաթերին հաստ կոշտուկներ ……, որոնք պաշտպանում են ……. անապատի արևից շիկացած ավազից: Խիտ ու երկար բուրդն օգնում է ……. դիմանալու ցերեկվա շոգին ու գիշերվա ցրտին: ……. բավարարվում …… փշոտ թփեր ուտելով: Այդ համեստ կերից էլ ……. սապատներում ճարպի պաշար է կուտակվում: Այդ ճարպի պաշարն է օգնում ……..՝ անհրաժեշտության դեպքում մի քանի օր ոչինչ չուտել և դիմանալ: ……..նաև քիչ ջուր ……խմում: Բայց միանգամից ընդունակ …… խմելու մինչև հիսունյոթ լիտր ջուր: ……. կարողանում ……..նաև աղի ջուր խմել: …….ապրում ……..երեսունհինգից-քառասուն տարի:

Կատարված փոփոխությունները գրի՛ր

Մեկ բառով գրի՛ր

Ոսկուց շինված բաներ-ոսկեղեն
մորթուց շինված բաներ-
բրդից շինված բաներ-
կաթից պատրաստված բաներ-
խմորից պատրաստված բաներ-
երկաթից պատրաստված բաներ-

Ո՞ր մասնիկն ավելացրիր: Գրի՛ր: _____ մասնիկը ցույց է տալիս ինչ-որ նյութից _____ բաներ:

Նույն համարով նշանակի՛ր այն արտահայտությունները, որոնք կարող են իրար փոխարինել:

1. [illegible]
2. Նազարն է միակն ու ամենահզորը
3. Վախեցնում է
4. Վագրին դիմադրել
5. Նազարի վրա են հույսները դնում
6. Հայտնվում

Էս ժամանակ մի վագր է լույս ընկնում երկրում ու սարսափի մեջ է գցում ժողովրդին: Ո՞վ սիրտ կանի վագրի դեմ կանգնել: Ամենքն էլ Նազարի երեսին են նայում. վերևում Աստված, ներքևում՝ քաջ Նազարը:

Նախադասությունները լրացրո՛ւ

Աղվե՞սը թագավորի աղբանոցում ոսկի գտավ, թե՞ .....
Աղվեսը թագավորի՞ աղբանոցում ոսկի գտավ, թե՞ .....
Աղվեսը թագավորի աղբանոցո՞ւմ ոսկի գտավ, թե՞ .....
Աղվեսը թագավորի աղբանոցում ոսկի՞ գտավ, թե՞ .....
Աղվեսը թագավորի աղբանոցում ոսկի գտա՞վ, թե՞ .....

Գրի՛ր ծաղիկների ու ծառերի անուններ

Այդ անունների առաջին տառերը փոքրատառով սկսեցի՞ր: Ճի՛շտ է:

Ընդգծված բառերի փոխարեն գրի՛ր հակառակ իմաստ ունեցող բառեր.

Լինում է, չի լինում մի **հզոր** թագավոր է լինում: Նա շատ **ուժեղ** է լինում, որովհետև շատ **հարուստ** է լինում: Մի **գեղեցիկ** աղջիկ է ունենում: Հավաքում է երկրի **քաջ** իշխաններին, որպեսզի աղջկան կնության տա: Հավաքվում են իշխանները, **անհամբերությամբ** սպասում թագավորի և **ուրախ-ուրախ** զրուցում: Հայտնվում է **զվարթ** թագավորն իր **չքնաղ** դստեր հետ: Բոլորն **աշխուժանում** են:

Կարճ, համառոտ պատմի՛ր՝ նախադասություններից բառեր հանելով

Կրակի գին ունենալ

Անընդհատ բնության դեմ կռիվ տվող, շատ ու շատ բաներ չիմացող մարդու համար տարիներ առաջ կրակ ստանալն այնքան էլ հեշտ գործ չի եղել: Երկար շփումից ստացած, մեծ խնամքով տարիներ շարունակ պահած կրակի շուրջը հավաքված խումբը ոչ մի գնով չի ցանկացել այն թողնել ուրիշի: Դաժան ու անզիջում կռիվներ են եղել կրակի համար: Իրար դեմ դուրս եկած ցեղեր են բախվել՝ կրակն իրարից խլելու համար: Խիստ կարևոր ու անհրաժեշտ այդ կրակը այլ ցեղից պաշտպանելու համար շատ զոհեր են եղել: Եվ կրակի գինը դարձել է կյանքի գին: Այստեղից էլ՝ կրակի գին ունենալ նշանակում է շատ թանկ լինել:

Գտի՛ր թաքնված բառը և նրա մեջ կատարված փոփոխությունները գրի՛ր.

երկրագունդ, երկրամաս, երկրաչափություն, երկրաբան, երկրային

լրջանալ, լրջություն, լրջախոհ, լրջմիտ

գնդակ, գնդասեղ, գնդաձև, գնդացիր

աղջնակ, աղջկական

Մեր բակը

Պատմի՛ր ձեր բակի մասին

Ա. Բակը նկարագրի՛ր (ուշադիր եղի՛ր, ոչ մի մանրամասնություն չե՞ս մոռացել):
Բ. Պատմի՛ր քո բակի ընկերների մասին (ով ինչով է աչքի ընկնում):
Գ. Պատմի՛ր ձեր բակի մեծահասակների մասին, որոնք ինչ-որ բանով առանձնանում են մյուսներից:

Գիտե՞ք, որ…

Լուսինը [illegible]ն եղած հեռավոր[illegible] **հարյուր վեց հազար** կիլոմետրի սահմաններում:
Լույսից զարմանալի բան, երևի թե, չկա: Նա սլանում է բնության մեջ հնարավոր ամենամեծ արագությամբ՝ վայրկյանում **երեք հարյուր հազար** կիլոմետր:
Գորտերն առաջին կենդանիներն են, որ **հազար ինը հարյուր վաթսունմեկ** թվականի մարտին սովետական տիեզերանավով տիեզերք բարձրացան ու ետ վերադարձան:

Ընդգծված բառերին նայի՛ր, ուշադրություն դարձո՛ւ՝ ինչպես են գրվում:

Նայի՛ր ընդգծված բառերին և բաց թողած բառերը լրացրո՛ւ.

Հերոսը մի անգամ ……, վախկոտը հազար անգամ է **մեռնում**: (մեռնել)
Մեկի մորուքը……., մյուսն **ասում է**՝ սպասի՛ր ծխախոտս վառեմ: (վառվել)
Մեկի բակում կուտ ……., ուրիշի բակում է **ածում** (ուտել)
Շան հետ……., բայց փայտը ձեռքիցդ մի՛ **գցիր**: (բարեկամանալ)
Սարը սարին……, բայց մարդը մարդուն **հանդիպում է**: (չհանդիպել)

Սա պատմություն է նախնադարյան մարդու մասին

Մարդն ապրել է քարանձավում, ժայռերի մեջ: Իր բնակավայրը տաքացրել է խարույկով: Նա զբաղվել է որսորդությամբ: Որսած միսը խորովել է խարույկի վրա, իսկ մորթին հագուստ է արել: Որսորդությունը հեշտ գործ չի եղել, և որպեսզի մարդն իր գոյությունը պահպանի, ապրել է մյուսների հետ՝ խմբերով, որն առաջնորդել է ամենափորձված ու քաջ որսորդը:
Դու նախնադարյան մարդ ես: Քո մասին ես պատմում:
Սկսի՛ր այսպես՝
Ես ապրում եմ քարանձավում, ժայռերի մեջ:

_____

_____

_____

_____

Ասացվածքները գտի՛ր.

է, ասելը, է, հեշտ, անելը, իսկ, դժվար

շուն, գյուղ, առանց, չի լինի

վկան, իր, է, աղվեսի, պոչն

Այս ո՞ւր ընկանք: Սա ի՞նչ աշխարհ է: Այս ինչպե՞ս ենք սկսել խոսել: Հա՛, ընկել ենք բացականչությունների աշխարհը:

Գրի՛ր դուցեմանգը

Այս ինչքա՛ն բացականչական նախադասություններ են հավաքված: Մի քանիսը գրի՛ր.

Նախադասությունները լրացրո՛ւ

Էս էն տունն է, որ շինել է վարպետ Օհանը:

Էս էն ցորենն է, որ պահած է էն տանը,
Որ……..:

Էս էն մուկն է, որ կերել է էն ցորենը,
Որ…….
Որ շինել է վարպետ Օհանը:

Էս էն կատուն է, որ բռնել է էն մկանը,
Որ……..
Որ պահած է էն տանը,
Որ շինել է վարպետ Օհանը:

Էս էն շունն է, որ……
Որ……..
Որ կերել է էն մկանը,
Որ պահած է էն տանը,
Որ շինել է վարպետ Օհանը:

Էս էն կովն է՝ կեռ պոզավոր,
Որ……,
Որ……..
Որ բռնել է էն մկանը,
Որ կերել է էն ցորենը,
Որ պահած է էն տանը,
Որ շինել է վարպետ Օհանը:

Էս էն աղջիկն է, որ…….
Որ…….
Որ…….
Որ…….
Որ…….

Որ……
Որ……

Բառերն առանձնացրո՛ւ և ասացվածքները կարդա՛.

Գիտուն աղվեսը երկու ոտքով է թակարդն ընկնում:

Կանգնած ջուրը կհոտի:

Կռվի մեջ չիր ու չամիչ չեն բաժանում:

Ջուրն ընկածը անձրևից չի վախենա:

Նախադասությունները լրացրո՛ւ.

Երկո՞ւ ընկերներ գնացին հեռու երկիր աշխատելու, թե՞…….
Երկու ընկերնե՞ր գնացին հեռու երկիր աշխատելու, թե՞……
Երկու ընկերներ գնացի՞ն հեռու երկիր աշխատելու, թե՞……...
Երկու ընկերներ գնացին հեռո՞ւ երկիր աշխատելու, թե՞……..
Երկու ընկերներ գնացին հեռու երկի՞ր աշխատելու, թե՞……
Երկու ընկերներ գնացին հեռու երկիր աշխատելո՞ւ, թե՞……

Հարցազրույց վարի՛ր ինքդ քեզ հետ:

Հատվածը կարդա՛: Ընդգծված բառերին ուշադրություն դարձրո՛ւ.

Էս ի՞նչ
Ոսկի-դ
Մոռ, ծի
Ալ, նարնջի, մավի, կապույտ…

Գրի՛ր՝ ինչե՞ր են թվարկված.

Պատմությունը կարդա՛.

Լուսանը ընտանի կատվի ցեղակիցն է: Նա շատ խոշոր է, մոտ մեկուկես մետր երկարություն ունի: Լուսանի պոչը կարճ է: Նա կատվի նման ծառ է մագլցում, տեսնում է մթության մեջ: Ընդանի կատվի նման լավ լսողություն ունի և լավ հոտառություն: Եթե կատուները չեն կարողանում արագ ու երկար վազել և միայն շներից փրկվելու համար են վազում մինչև մոտակա ծառը կամ ցանկապատը, ապա լուսանը կարող է նույնիսկ փափուկ ձյան վրայով վազել: Այնուամենայնիվ, լուսանը կատու է: Նա կարող է անաղմուկ, գաղտագողի մոտենալ և ժամերով, համբերությամբ դարան մտնել: Որսում է եղնիկներ, նապաստակներ, մկներ: Նա ընտանի կենդանիների վրա գրեթե չի հարձակվում:

Լուսանի մասին այնպես պատմի՛ր, ասես նա այլևս չկա, ոչնչացել է և վերացել:
Սկսի՛ր այսպես. Լուսանը կատվի ցեղակիցն է եղել:

Փողոցի այս մասում թարս հարցերն են ապրում:

Ինչո՞ւ կնճիթը փիղ ունի:
Ինքդ թարս հարցեր գրի՛ր:

Փողոցի այս մյուս մասում թարս հարցերի պատասխաններն են ապրում: Կնճիթը փիղ ունի, որովհետև փիղը ոտքեր ունի, իսկ կնճիթը շատ է սիրում զբոսնել:
Գրի՛ր գրածդ թարս հարցերի պատասխանները:

Նայի՛ր ընդգծված բառերին և *իմանալ* բառը անհրաժեշտ ձևով գրի՛ր.

Շատ ապրողը շատ բան չի իմանում, շատ ման եկողն ……շատ բան…...:
Շատ ապրողը շատ բան չի իմանա, շատ ման եկողը շատ բան……:
Շատ ապրողը շատ բան չի իմացել, շատ ման եկողն ……շատ բան……..:
Շատ ապրողը շատ բան չի իմանալու, շատ ման եկողն ……շատ բան……:

Պատասխանի՛ր հարցերին.

Քույրիկս այնքան չի բարկանում, ինչքան եղբայրս:
Եղբայրս այնքան չի բարկանում, ինչքան մայրիկս:

Մայրիկս այնքան չի բարկանում, ինչքան հայրիկս:
Ո՞վ է ամենաքիչը բարկանում:

Պատմությունն ընդարձակի՛ր՝ միայն նախադասությունների մեջ բառեր ավելացնելով.

Մեքսիկայում մի ծաղիկ կա, որին տեսնողը վախից ուշաթափվում է: Ուշաթափվողներից մեկը պատմել է, որ ծառի վրա չոված մատներով, արյունոտ, սարսափելի մեծ-մեծ թաթեր է տեսել: Ուշքի գալուց հետո մոտեցել է ու տեսել, որ ո՛չ մի թաթ էլ չկա, ծաղիկներ են:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Գրի՛ր աղջիկների անուններ, որոնք նաև ծաղկի անուն են:

_____
_____
_____

Հատվածը կարդա՛: Ուշադրություն դարձրու ընդգծված բառերին.

Աղջի՛, աղջի՛, ծիլ-ծաղիկներ,
Քանի՞ քնեք, վե՛ր կացեք, վե՛ր,
Խնկածաղիկ,
Ծնկածաղիկ,
Արևքուրիկ,
Շար-շարուրիկ,

Հասմիկ, հափրուկ,
Ամանկոտրուկ:
Գրի՛ր՝ ինչե՞ր են թվարկված:

_____
_____
_____

Դու «Ծիտը» հեքիաթը գիտես: Նախադասություններն այնպե՛ս լրացրու հարցերին պատասխանող բառերով, որ վերաբերմունքդ երևա:

Լինում է, չի լինում մի (ինչպիսի՞).....ծիտ:
Մի անգամ էս ծտի ոտքը (ինչպիսի՞ .....փուշ է մտնում: Դես է թռչում, դեն է թռչում, տեսնում է մի (ինչպիսի՞ .....պառավ փետի է ման գալիս, թոնիր վառի, հաց թխի: (Ինչպե՞ս).....ասում է.
-Նանի՛ջան, նանի՛, (ինչպիսի՞) ոտքիս փուշը հանի՛ր, թոնիրդ վառի՛ր, ես էլ գնամ (ինչպե՞ս) քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Մեկ բառով գրի՛ր.

Ձյունով պատված-
Շատ խոսող-
Աստղերով զարդարված-
Արագ վազող-

Հատվածը կարդա՛:

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք:
Հաղին էր, Հյուդին էր, Չատին էր, Մատին էր, հերս էր, ես էի, գնացինք որսի:

Նայի՛ր ընդգծված բառերին, թվարկված են հեքիաթի հերոսները: Ստորակետներն էլ նկատեցի՞ր: Լա՛վ է:

Նախադասության մեջ ընդգծված խոսքերը գրի՛ր որպես այդ մարդկանց ուղղակի խոսքեր:

Օրինակ՝
Փոքրիկ տղան մի անգամ դպրոցից տուն է գալիս և մորը հարցնում, թե ճշմարտությունն ասելու համար պատժո՞ւմ են:
Փոքրիկ տղան մի անգամ դպրոցից տուն է գալիս և մորը հարցնում:
-Մայրի՛կ, ճշմարտությունն ասելու համար պատժո՞ւմ են:

Մայրն ասում է, որ՝ ո՛չ, չեն պատժում:
Մայրն ասում է.

Տղան զարմանում է և հարցնում, թե այդ դեպքում ուսուցիչն իրենց ինչո՞ւ պատժեց, երբ ինքն ասաց, որ տնային աշխատանքը չի կատարել:
Տղան զարմանում է և հարցնում.

Նայի՛ր ընդգծված բառերին և դուրս գալ-ն անհրաժեշտ ձևով գրի՛ր:

Արևը որ……, աստղերը խավարում են:
Արևը որ……, աստղերը կխավարեն:
Արևը որ……..աստղերը խավարեցին:

Հատվածը կարդա՛: Ընդգծված բառերին ուշադրություն դարձրո՛ւ:

Վարպետ Բզեզն ամռան մի օր
Դպրոց բացեց մի ծառի տակ
Ու հավաքեց թիթեռ, ճանճ, բոռ,
Մժեղ, մրջյուն, մլակ, մոծակ:

Թվարկի՛ր վարպետ Բզեզի աշակերտներին.

Թվարկվող բառերն իրարից անջատվում են _____:

Ընդգծված բառերին նայի՛ր և բաց թողած բառն անհրաժեշտ ձևով գրի՛ր.

Աղվեսի դունչը խաղողին **չհասավ**, ……
-Թթու է:
Երբ աղվեսի դունչը խաղողին **չի հասնում**, …….
- Թթու է:
Եթե աղվեսի դունչը խաղողին **չհասնի,** …….
-Թթու է:
Եթե աղվեսի դունչը խաղողին **չի հասնելու**, ……
Թթու է:

Մեկ բառով գրի՛ր

Անուշ հոտ ունեցող-
Կարճ հասակ ունեցող-
Վարդի գույն ունեցող-
Բարի սիրտ ունեցող-
Թանկ գին ունեցող-

Առաջին օր

Երկրորդ օր

Երրորդ օր

Չորրորդ օր

Հինգերորդ օր

Վեցերորդ օր

Յոթերորդ օր

Թվարկի՛ր քո սիրած բոլոր առարկաները:

Ստորակետերով անջատեցի՞ր, լա՛վ է:

Նայի՛ր տրված օրինակին և հարցերին պատասխանի՛ր:

Ծիտի՞կն ու Մուկիկը եղբայրացան, գետի ափին միասին տուն շինեցին:
-Ո՛չ, ճուտիկն ու Մուկիկը եղբայրացան, գետի ափին միասին տուն շինեցին:

Ծիտիկն ու Մուկի՞կը եղբայրացան, գետի ափին միասին տուն շինեցին:
-Ո՛չ,

Ծիտիկն ու Մուկիկը եղբայրացա՞ն, գետի ափին միասին տուն շինեցին:
-Ո՛չ,
_____

Ծիտիկն ու Մուկիկը եղբայրացան, գետի՞ ափին միասին տուն շինեցին:
-Ո՛չ,
_____

Ծիտիկն ու Մուկիկը եղբայրացան, գետի ափի՞ն միասին տուն շինեցին:
-
Ո՛չ,_____
__

Ծիտիկն ու Մուկիկը եղբայրացան, գետի ափին միասի՞ն տուն շինեցին:
-Ո՛չ,
_____

Ծիտիկն ու Մուկի՞ը եղբայրացան, գետի ափին միասին տո՞ւն շինեցին:
-Ո՛չ,
_____

Ծիտիկն ու Մուկիկը եղբայրացան, գետի ափին միասին տուն շինեցի՞ն:
-Ո՛չ,
_____

Նախադասության ընդգծված մասերը գրի՛ր որպես այդ մարդկանց ուղղակի խոսքեր.

Մի մարդ[illegible]ու սոտ հյուր եկավ հեռվում ապրող նրա ծանոթներից մեկը: Օրեր էին անցնում, բայց հյուրը մեկնելու ցանկություն չուներ: Մի անգամ տանտերն իր հյուրին հարցրեց, **թե նրա կինն ու երեխաները չե՞ն կարոտել նրան:**
Մի անգամ տանտերն իր հյուրին հարցրեց.
- _____
Հյուրը պատասխանեց, որ **տանտերը լավ է գլխի ընկել: Ինքն արդեն նամակ է գրել, որ կինն ու երեխաներն էլ գան:**
Հյուրը պատասխանեց.
- _____

Նախադասությունները շարունակի՛ր: Ընդգծված բառերի նկատմամբ ուշադիր եղի՛ր:

Եթե մեծերը գոնե մի՛ քիչ փոքր **լինեին**, _____
Եթե ամռան տաք արևը ձմռանը **լիներ**, _____
Եթե տարին ընդամենը մի օր **լիներ**, _____
_____եթե բոլոր հեքիաթներն իրական **լինեին**:
_____եթե մարդիկ ամեն ինչի վրա **զարմանային:**
_____եթե բարկացող **չլիներ**:

Թվարկի՛ր այն բոլոր նվերները, որոնք շատ կուզեիր ստանալ:

_____
_____
_____

Ստորակետերը չմոռացա՞ր դնել: Շա՛տ լավ է:

Պատմի՛ր քո նոր ուսուցիչներից մեկի մասին.

Ա. նոր ուսուցչից ստացած քո առաջին տպավորության մասին պատմի՛ր:
Բ. նկարագրի՛ր նրան (որքան կարող ես՝ մանրամասնորեն)
Գ. ինչո՞վ է նա նման մյուս ուսուցիչներին:
Դ. ինչո՞վ է առանձնանում մյուսներից:
Ե. նրա մեջ ամենից շատ ի՞նչն է քեզ դուր գալիս:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Բառերը գտի՛ր և գրի՛ր

1. Բույր-հոտ, հարևան-դրացի, արքա-
2. Առարկա, որով կենդանիներ են որսում.
3. Երեկո-իրիկուն,-վերջալույս, խնջույք-կերուխում-խրախճանք, շոր-զգեստ-
4. Արագ-դանդաղ, բարձր-ցածր, սկիզբ-
5. Մանրել-մանրացնել-կտրտել, խռովել-նեղանալ-վիրավորվել, թացացնել-ջրոտել-
6. Քար-անձավ-քարանձավ, կես-օր-կեսօր, տղա-……..-տղամարդ

Ուշադրությո՛ւն դարձրու գրածդ բառերին:
Գրության և արտասանության մեջ տարբերություն կա՞:

Հասել ենք նամակների աշխարհը: Ինչքա՛ն նամակներ կան: Վա՛յ, պարզվում է՝ հեքիաթների հերոսներն էլ են նամակներ գրում:

Սա էլ Անխելք մարդու նամակն է Անբան Հուռուն

Հարցերին պատասխանի՛ր.

Ո՞ր թվականին ես ծնվել:

_____

Քանի՞տարեկան ես:

_____

Ո՞ր թվականին ես դպրոց գնացել:

_____

Դպրոցը ո՞ր թվականին ես ավարտելու:

_____

Ո՞ր թվականին ես լինելու քսան տարեկան:

_____

Ո՞ր թվականին ես լինելու հարյուր տարեկան:

_____

Միասին գրեցի՞ր: Մյուս թվերի անուններն էլ առանձին գրեցի՞ր: Լա՛վ է:

Նախադասության մեջ ընդգծված խոսքերը գրի՛ր որպես հերոսների ուղղակի խոսքեր:

Մի անգամ օձի պոչը որոշեց առաջ սողալ և մնացած անդամներին քարշ տալ իր ետևից: Նրանք զարմացան, **թե ինչպե՞ս կարող է պոչն իրենց առաջ տանել, եթե չունի ո՛չ աչք, ո՛չ քիթ:** Բայց պոչը չլսեց: Առաջ սողաց և ամբողջ մարմինն իր ետևից տարավ, մինչև հասավ քարքարոտ տեղեր ու վիրավորեց թե՛ իրեն, թե՛ մարմնի մյուս անդամներին: Միայն այդ ժամանակ գլխին **խնդրեց խղճալ և փրկել իրեն:**

Մի անգամ օձի պոչը որոշեց առաջ սողալ և մնացած անդամներին քարշ տալ իր ետևից: Նրանք զարմացան և ասացին.

- _____

Բայց պոչը չլսեց: Առաջ սողաց և ամբողջ մարմինն իր ետևից տարավ, մինչև հասավ քարքարոտ տեղեր ու վիրավորեց թե՛ իրեն, թե՛ մարմնի մյուս անդամներին: Միայն այդ ժամանակ գլխին խնդրեց.

- _____

Ինչպիսի՞ն է քո դպրոցի բակը, այնտեղ ինչե՞ր կան, թվարկի՛ր:

Թվարկելիս ստորակետերը դնել չմոռացա՞ր: Ապրե՛ս:

Նայի՛ր ընդգծված բառերին և *գցել* բառն անհրաժեշտ ձևով գրի՛ր.

Հիմարը մի քար……հորը, հազար խելոք հավաքվեցին, **չկարողացան** հանել:
Հիմարը մի քար……հորը, հազար խելոք հավաքվում են, **չեն կարողանում** հանել:
Հիմարը մի քար……հորը, հազար խելոք կհավաքվեն, **չեն կարողանա** հանել:
Հիմարը մի քար……հորը, հազար խելոք հավաքվեին, **չէին կարողանա** հանել:
Հիմարը մի քար……հորը, հազար խելոք հավաքվելու են, **չեն կարողանալու** հանել:

Գրի՛ր այնպիսի անուններ, որոնք նաև որպես մարդկանց անուններ են գործածվում.

Այսպես՝ վահան-Վահան, համեստ-Համեստ, թագուհի-Թագուհի

Նախադասության մեջ ընդգծված խոսքերը գրի՛ր որպես հերոսների ուղղակի խոսքեր.

Ուլիկը հոտից ետ մնաց և գայլի ճանկն ընկավ: Նա գայլին խնդրեց, **որ ուտելուց առաջ սրինգ նվագի, ու ինքը պարի այդ սրնգի տակ**: Գայլը համաձայնեց: Սկսեց սրինգ նվագել, իսկ ուլիկն սկսեց պարել: Շները լսեցին գայլի սրնգի ձայնն ու ընկան գայլի ետևից: Գայլը փախչելիս շուռ եկավ և ասաց, **որ իրեն տեղն է: Ինքը միշտ մսագործ է եղել, ինչո՞ւ հանկարծ որոշեց երաժիշտ դառնալ:**

Ուլիկը հոտից ետ մնաց և գայլի ճանկն ընկավ: Նա գայլին խնդրեց.

- _____

Գայլը համաձայնեց: Սկսեց սրինգ նվագել, իսկ ուլիկն սկսեց պարել: Շները լսեցին գայլի սրնգի ձայնն ու ընկան գայլի ետևից: Գայլը փախչելիս շուռ եկավ և ասաց.

- _____

Մեկ բառով գրի՛ր.

Կանաչով զարդարված-
Թանկ արժեցող-
Խաղաղություն սիրող-
Ցածր հասակ ունեցող-
Կարմիր խայտեր ունեցող-

Թվարկի՛ր՝ ի՞նչ ես սիրում անել:

_____
_____
_____
_____
_____
_____

Չմոռանա՛ս բառերն ստորակետով անջատել:

Թարս աշխարհի թարս փողոցում ապրում են՝ տե՛ս՝ ովքեր:

ա՛խ, վա՛յ, հե՛յ, կը՛ռռ, ուխա՛յ, բը՛զզ, հա՛ֆ-հա՛ֆ, չրը՛խկ, չլը՛մփ, զը՛նգ հա զը՛նգ, պա՛հ, ջո՛ւ-ջո՛ւ
Բայց տե՛ս՝ ինչպիսին են նրանք՝
Ուխա՛յ, մատս կտրեցի:
Ջա՛ն, ջա՛ն, մայրիկս ինձ պատժելու է:

_____
_____
_____
_____
_____

Թվարկի՛ր՝ ի՞նչ ես սիրում անել:

_____
_____
_____
_____
_____

Թվարկելիս ստորակետները գրեցի՞ր: Լա՛վ է:

Կարդացե՛ք դերերով.

Գիտե՞ք, որ առյուծն էլ նապաստակի պես քնում է աչքերը բաց: Այսպես մի անգամ իր մութ քարայրի առաջ քնած էր՝ ծանր որսից նոր վերադարձած:
Կողքից անցավ վագրը, տեսավ ննջող հսկային և սկսեց ծաղրել նրան:
- Սա՞է ամենազոր առյուծը, սրա՛ն տեսեք, նապաստա՛կ:…
-Նապաստա՛կ,-մռնչաց առյուծը, վեր թռավ և բռնեց վագրի կոկորդից:
Վագրը պատժվեց, իսկ հաղթողը հանգիստ պառկեց քնելու:

Հերոսների խոսքերը գրի՛ր առանձին-առանձին:

_____
_____
_____
_____
_____

Ինքդ բառերը բացատրի՛ր:

Թագաժառանգ-
Արևավառ-
Ձկնորս-
Կեսօր-
Ժամացույց-
Ձեռնափայտ-
Հեռախոս-

Բառն ընտրի՛ր և նախադասությունը լրացրո՛ւ.

Ժամացույցն աշխատում է, և սլաքները ……առաջ
Գնալու են, գնում են, կգնան, գնացել են:
Ընտրությունդ պատճառաբանի՛ր:

Կարդա՛

Բառաբ

Այս ծառն ապրում է չորս-հինգ հազար տարի: Այն այնքան էլ բարձր չէ, բայց դրա փոխարեն այնքան հաստ է, որ այն գրկելու համար ձեռք-ձեռքի տված մի ամբողջ դասարան է պետք: Չնայած այն շատ մեծ է, բայց նրանից փոքրիկ խարույկ անգամ հնարավոր չէ վառել, որովհետև այդ ծառի փայտը չի վառվում: Ծառը տերևաթափ է լինում ո՛չ թե աշնանը, այլ

ձմռանը: Իսկ ձմռանը այն ծածկվում է մեծ, թաթաձև տերևներով և խոշոր, սպիտակ ծաղիկներով: Ծառի պտուղները երկար են, վարունգանման, հյութեղ, ու շատ քաղցր: Դու մե՛ծ գիտնական ես: Բույսերի նոր տեսակներ ես կարողանում ստանալ: Որոշել ես հսկա ծառ աճեցնել, անունը՝ բառբաբ, և պատմում ես, թե ինչպիսի՞ն է լինելու այն: Սկսի՛ր այսպես.

Իմ ծառն այսպիսին է լինելու.

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Ի՞նչ հարցին պատասխանող բառերով

Աստղերի նման փայլուն-
Արևի նման տաք-
Ձյան նման սառը-
Աղվեսի նման խորամանկ-
Կապիկի նման ճարպիկ-
Շան նման հավատարիմ-
Սրի պես կտրող-
Քարի պես չոր-
Ջրի նման հոսող-
Ծաղկի պես քնքուշ-
Սոնձի պես կպչուն-
Ժայռի պես ամուր-

Բառերն ինքդ բացատրի՛ր

Արևմուտք-
Դասագիրք-
Գազարագույն-

Դասղեկ-
Զարդատուփ-
Ձեռագործ-
Կարգապահ-

Այս պատմությունը ներկայացրո՛ւ երկխոսությամբ

Պատմեմ մի բզեզի թրթուրի մասին: Այդ թրթուրը, որպեսզի աճի, պետք է սնվի մեղրով: Բայց ինչպե՞ս: Մայր չունի, նա մահանում է ձու դնելուց հետո: Ո՞վ պիտի նրան կերակրի: Թրթուրը սողալով բարձրանում է ծաղկի վրա, թաքնվում է նրա թերթիկների մեջ ու համբերությամբ մեղվին սպասում: Մեղուն գալիս է, իջնում ծաղկին, իսկ թրթուրը կպչում է նրա մազմզուկներից: Մեղուն թռչում է իր բույնը, և թրթուրը նրա հետ մեղրի շտեմարանում է հայտնվում:

_____
_____
_____
_____
_____
_____

Նախադասությունը լրացրո՛ւ.

_____թռվռուն էր, ինչպես թիթեռնիկը:
_____պայծառ էր, ինչպես արևը:
_____կտկտան էր, ինչպես կարկուտը:
_____զրնգուն էր, ինչպես զանգը:
_____տզզում էր, ինչպես ճանճը:
_____թռչկոտում էր, ինչպես նապաստակը:
_____ճռճռում էր, ինչպես ձյունը:
_____ծվծվում էր, ինչպես մուկը:

Նախադասությունը լրացրո՛ւ.

Կատուն այնքան արագ չի վազում, ինչքան նապաստակը:

Կատուն նապաստակից……է վազում:
Նապաստակը կատվից ……..է վազում:

Շունն այնքան բարձր չի ցատկում, ինչքան կատուն:
Կատուն շնից ……է ցատկում:
Շունը կատվից……է ցատկում:

Կրիան այնքան դանդաղաշարժ չէ, ինքան խխունջը:
Կրիան խխունջից ……է:
Խխունջը կրիայից……է:

Վագրն այնքան ուժեղ չէ, ինչքան առյուծը:
Վագրն առյուծից ……է:
Առյուծը վագրից……է:

Քո սիրած զգեստի, խաղալիքի կամ մի ուրիշ իրի մասին պատմի՛ր, որը հիմա ունես:

Սկսի՛ր այսպես.
Գիտե՞ք, ես ……ունեմ: Պատմեմ նրա մասին:

_____
_____
_____
_____
_____
_____

Հարցերին պատասխանի՛ր.

Ճնճղուկն այնքան բարձր չի թռչում, ինչքան ծիծեռնակը: Արծիվն ավելի բարձր է թռչում, քան ծիծեռնակը:

Սրանցից ո՞րն է ամենաբարձրը թռչում:

_____

Սրանցից ո՞րն է ամենացածրը թռչում:

_____

Բլրակն այնքան բարձր չէ, ինչքան բլուրը: Սարն ավելի բարձր է, քան բլուրը:

Սրանցից ո՞րն է ամենաբարձրը:

_____

Սրանից ո՞րն է ամենացածրը:

_____

Նախադասության մեջ ընդգծված խոսքերը գրի՛ր որպես հերոսների ուղղակի խոսքեր:

Հռչակավոր լեհ դերասանուհին Ամերիկայում ելույթներ էր ունենում: Մի ելույթի ժամանակ ներկաները **խնդրում են մի բան արտասանել մայրենի լեզվով**: Դերասանուհին **հրաժարվում է**, **բայց երբ շատ են խնդրում, վերջում զիջում է** ու սկսում է արտասանել: Տեսարանը հուզիչ էր: Ներկաները չէին կարողանում զսպել արցունքները, թեև ոչինչ չէին հասկանում: Երբ հարցնում են, **թե ի՞նչ էր արտասանում**, դերասանուհին պատասխանում է, **որ պարզապես հաշվում էր մեկից մինչև հարյուրը**:

Հռչակավոր լեհ դերասանուհին Ամերիկայում ելույթներ էր ունենում: Մի ելույթի ժամանակ ներկաները խնդրում են.

- _____

Դերասանուհին հրաժարվում է՝ ասելով.

- _____

Երբ շատ են խնդրում, վերջում զիջում է և ասում.

- _____

Սկսում է արտասանել: Տեսարանը հուզիչ էր: Ներկաները չէին կարողանում զսպել արցունքները, թեև ոչինչ չէին հասկանում: Հարցնում են.

- _____

Դերասանուհին պատասխանում է.

- _____

Դերերով կարդացե՛ք.

Մի դաշտում իրար հետ կողք-կողքի արածում էին ցուլն ու եղջերուն: Ցուլն ասաց եղջերուին.

- Եթե առյուծը հարձակվի մեզ վրա, արի նրա դեմ միասին կռվենք:
- Հույսդ ինձնից կտրիր,-պատասխանեց եղջերուն,-ավելի լավ է՝ ես փախչեմ:

Հերոսների խոսքերն առանձին-առանձին գրի՛ր:

Գրի՛ր այնպիսի բանի մասին, որի համար քեզ գովել և ասել են.

- Ապրե՛ս, շա՛տ ապրես:

Գրի՛ր այնպիսի բանի մասին, որի համար քեզ նախատել և ասել են.

- Ապրե՛ս, շա՛տ ապրես:

Գրի՛ր այնպիսի բանի մասին, որի համար քեզ վրա բարկացել և ասել են.

_____
_____
_____
_____

- Ապրե՛ս, շա՛տ ապրես:

Գրի՛ր այնպիսի բանի մասին, որի վրա ծիծաղել և ասել են.

_____
_____
_____
_____
_____

- Ապրե՛ս, շա՛տ ապրես:

Նախադասությունները լրացրո՛ւ հարցերին համապատասխան բառերով.

Շնիկն ու գորտերը

(Ինչպիսի՞)……շնիկն ընկավ մի անցորդի ետևից ու գնաց: Երկար ճանապարհից ու ամառվա (ինչի՞ց) …… հոգնած, իրիկնամուտին մի լճակի մոտ, խոտերի վրա (ինչպե՞ս) ……պառկեց քնելու: նա քուն մտավ, իսկ գորտերը մոտերքում (ինչպե՞ս)……..սկսեցին համերգը: Շնիկի (ինչպիսի՞) ……քունը խանգարվեց: նա (ինչքա՞ն) ……..բարկացավ, մոտեցավ լճափին ու գորտերի վրա (ի՞նչ արեց) ……: Բայց ինչքան էլ հաչեց, (ինչե՞րը)……չլռեցին: Շունը (ինչպե՞ս)……ասաց. «Ես ձեզնից հիմար կլինեմ, եթե ձեր նման ճղճղաններին (ի՞նչ) ……սովորեցնեմ: »

Ընկերոջդ այնպիսի՛ բան պատմիր, որ զարմացած ասի՝

_____
_____
_____
_____

- Չի՛ կարող պատահել:

Այնպիսի՛ բան պատմիր ընկերոջդ, որ տխրած ասի՝

_____
_____
_____
_____

- Չի՛ կարող պատահել:

Այնպիսի՛ բան պատմիր ընկերոջդ, որ ուրախացած ասի՝

_____
_____
_____
_____

- Չի՛ կարող պատահել:

Այնպիսի՛ բան պատմիր ընկերոջդ, որ բարկացած ասի՝

_____
_____
_____
_____

- Չի՛ կարող պատահել:

Այնպիսի՛ բան պատմիր ընկերոջդ, որ վստահ ասի՝

_____
_____
_____
_____

- Չի՛ կարող պատահել:

Այս աշխարհն էլ այսպիսին է. մի մասում ապրում են բառեր, մյուս մասում՝ այս բառերի շա՛տ հետաքրքիր բացատրությունները:

Բացատրությունները գրի՛ր.
Կարոտել-
Կանաչ-
Երգել-
Հայելի-
Կատակ-
Կարկուտ-

Գրի՛ր երկխոսություն, որը կարող էր լինել կատվի ու ոստիկանների միջև.

Բոլորին թվում է, թե ոստիկաններն ամենաուժեղ, ամենահնարամիտ, ամենաքաջ, մի խոսքով, ամենա… ամենա… ամենա… մարդիկ են: Բայց արի ու տես, ամերիկացի ոստիկանները մկների հախից չեն կարողանում գալ: Մկները նրանց բոլոր փաստաթղթերը կրծում էին ու փչացնում: Վերջը ոստիկանները հնարը գտան. աշխատանքի ընդունեցին Ֆենդ անունով մի կատվի: Ոստիկան Ֆենդը լավ գիտեր իր գործը: Մի քանի օրից ոստիկանությունում մի մուկ էլ չմնաց: Ֆենդին լավ կերակրում էին ու լավ էլ վարձատրում:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Չեմ կարող չգնալ **նախադասության իմաստը ո՞ր նախադասությունն է արտահայտում:**

Չեմ կարող գնալ:
Կարող եմ չգնալ:
Պիտի գնամ:
Չպիտի գնամ:

Պիտի չգնամ:

Ինչպիսի՞ն է դասասենյակդ. քո դասասենյակում ինչե՞ր կան՝ թվարկի՛ր:

Օրագիր

Այս շաբաթվա դեպքերը գրի՛ր:

Առաջին օր

Երկրորդ օր

Երրորդ օր

Չորրորդ օր

Հինգերորդ օր

Վեցերորդ օր

Յոթերորդ օր

Գրիր այնպիսի՛ նախադասություններ, որոնց իմաստը արտասանությունից կախված լինի:

_____
_____
_____
_____
_____

Չխոսել չի լինի **նախադասության իմաստը ո՞ր նախադասությունն է արտահայտում:**

Չպետք է խոսել:
Պետք է խոսել:

Պետք է չխոսել:
Պետք է խոսել:

Այս բառերը բացատրի՛ր

Լուսնիկ-
Արևակն-
Զյունազարդ-
Լուսնաչյա-
Ծովաքարիկ-

Պատմի՛ր քո սիրած խաղերից մեկի մասին

Ա. նկարագրի՛ր խաղը (այնպես, որ չիմացող մարդը կարողանա խաղալ):
Բ. Ինչո՞ւ ես սիրում այդ խաղը:
Գ. Ո՞վ է ամենալավ խաղացողը:
Դ. Ի՞նչ ես անում, երբ հաղթում ես:
Ե. Երբ պարտվում ես, ի՞նչ ես անում:

Ընդգծված բառակապակցությունները որոնցո՞վ կփոխարինես

Վագրի անունը լսելուն պես Նազարի **սիրտը փորն է ընկնում**: Ուզում է **դուրս պրծնել**, փախչել իրենց տուն: Կանգնածներն էլ կարծում են, թե իրեն **պատեպատ է տալիս**, որ գնա վագրին սպանի: Բերում են, **զենքը դեմ են տալիս**, որ առանց զենք չգնա: Նազարը զենքը վերցնում է ու **շունչն անտառում առնում**: Անտառում մի ծառ է բարձրանում, վրան **տապ անում**, որ ո՛չ ինքը վագրին հանդիպի, ո՛չ վագրն իրեն:

Թաքնվում, շատ է վախենում, անտառում իրեն ապահով է զգում, աչքի առաջ են դնում, վտանգից ազատվել, այս ու այն կողմ է գցում

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Նայի՛ր ընդգծված բառերին և *ասել* բառը անհրաժեշտ ձևով գրի՛ր.

Ագռավ[illegible]ուտը:
Ագռավ[illegible]ուտը:
Ագռավ[illegible] **եթե հարցներս** թռչունների մեջ ո՞վ է սիրունը_____ իմ ճուտը:
Ագռավին **հարցրին**՝ թռչունների մեջ ո՞վ է սիրունը, _____՝ իմ ճուտը:

Չեմ կարող չպատմել **նախադասության իմաստը ո՞ր նախադասությունն է արտահայտում**

Չեմ կարող պատմել:
Կարող եմ չպատմել:
Պիտի պատմեմ:
Չպիտի պատմեմ:

Պիտի չպատմեմ:

_____

Պատմի՛ր այն նվերի մասին, որն անցած տարի էիր ստացել:

Սկսի՛ր այսպես.
Անցած տարի ……էի նվեր ստացել:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Հարցերի պատասխանները լրացրո՛ւ.

Աքլո՞ր կտուրը բարձրացավ, որ աշխարհը տեսնի, բայց դիմացի սարը խանգարեց:
- Ո՛չ_____

Աքլորը կտո՞ւրը բարձրացավ, որ աշխարհը տեսնի, բայց դիմացի սարը խանգարեց:
- Ո՛չ_____

Աքլորը կտուրը բարձրաց՞վ, որ աշխարհը տեսնի, բայց դիմացի սարը խանգարեց:
- Ո՛չ_____

Աքլորը կտուրը բարձրացավ, որ աշխա՞րհը տեսնի, բայց դիմացի սարը խանգարեց:
- Ո՛չ_____

Աքլորը կտուրը բարձրացավ, որ աշխարհը տեսնի՞, բայց դիմացի սարը խանգարեց:
- Ո՛չ_____

Աքլորը կտուրը բարձրացավ, որ աշխարհը տեսնի, բայց դիմացի՞սարը խանգարեց:
- Ո՛չ_____

Աքլորը կտուրը բարձրացավ, որ աշխարհը տեսնի, բայց դիմացի սա՞րը խանգարեց:

- Ո՛չ_____

Աքլորը կտուրը բարձրացավ, որ աշխարհը տեսնի, բայց դիմացի սարը խանգարե՞ց:

- Ո՛չ_____

Գրի՛ր՝ ինչո՞ւ տարբեր պատասխաններ ստացվեցին:

Ընդգծված բառերը որոնցո՞վ կփոխարինես:

Գալիս են **շուքով** ջաղացի դռանը կանգնում: Ջաղացպանի քուրքը հանում են, արքայի **հագուստը** հագցնում, նստեցնում են նժույգ ձիուն: Շրջապատված **իշխանավորներով**, առջևից՝ ձիավորներ, ետևից՝ ձիավորներ, էսպես բերում են շուքով արքայի ապարանքը: Ոչ մի անգամ ապարանք չտեսած ջաղացպա՛ն՝ շփոթված, զարմացած մեկ շուրջն է նայում, մեկ հագի շորերին է նայում անհանգստացած:

Հանդեսով, մեծամեծներով, թագավորի, խլշկոտած, բերանը բաց, շշկլված, իր օրում, շորերը, պալատը, չորս կողմն է նայում:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Ո՛չ դու ես ինձ պատմել, ո՛չ քույրդ նախադասության միտքը ո՞ր նախադասությունն է արտահայտում.

Դու ի[illegible] չես պատմել, քույրդ է պատմել.

Դու ու քույրդ ինձ չեք պատմել:
Դու ես ինձ պատմել, քույրդ չի պատմել:
Դու ու քույրդ եք ինձ պատմել:

_____

_____

Նախադասությունները լրացրո՛ւ այս բառերով.

Ես, ինքս, դու, ինքդ, նա, ինքը
Սա……եմ՝ ա՛յ այսպիսի երկար ականջներով:
Սա իմ տունն է, ես……եմ սարքել:
Սա……..ես՝ ա՛յ այսպիսի երկա՛ր պոչ ունես և շա՛տ խորամանկ ես:
Սրանք քո կարճ ոտքերն են: Դու……էլ գիտես, թե ինչքա՛ն վտանգավոր են:
Սա……..է: Տե՛ս, ի՛նչ սիրունիկն է:
Նա……էլ գիտի այդ մասին:

Յուրաքանչյուր նախադասության համար բառերից մեկն ընտրի՛ր և գրի՛ր.

……ֆշշում են օձերը:
Ինչո՞ւ, ի՞նչ նպատակով:
Օձերի……չարության նշան չէ:
Ֆշշոց, սուլոց, ֆշֆշոց:
Նրանք այդ ֆշշոցով……..…… իբր ես այստեղ եմ:
Զգուշացնել, նախազգուշացնել, ահազանգել:
Օրինակ՝ բոժոժավոր օձերը, որոնք շատ թունավոր են, պոչի……ունեն զնգացող բոժոժներ:
Գազաթ, կատար, ծայր:
Երբ……կենդանու է նկատում, օձը ցցում է պոչն ու թափահարում բոժոժները:
մեծ, ահագին, հսկայական, վիթխարի:
Դա ազդանշան է, որ օձը քեզ……., եթե չես ուզում՝ մի՛ մոտենա:
Նայել, դիտել, նկատել:
Մարդկանց վրա օձերը ……չեն հարձակվում:
Գրեթե, մոտավորապես, իբր:
Ամենից առաջ նրանք ……հանկարծակիի գալուց, երբ տրորում ես կամ ձեռքդ մտցնում ես նրանց բույնը:

Կծոտել, խայթել:

Նախադասությունները լրացրո՛ւ.

- Ձախո՛րդ Փանոս,

_____
_____
_____, Պոչա՛տ աղվես:
_____
_____
_____
Անհա՛ղթ աքլոր,
_____
_____
_____Սուտլի՛կ որսկան, _____
_____
_____:

Իսկ հիմա նույն նախադասությունները գրի՛ր առանց ձախորդ, պոչատ, անհաղթ, սուտլիկ բառերի:

Յուրաքանչյուր նախադասության համար բառերից մեկն ընտրի՛ր և գրի՛ր:

Սարդերը շատ…… ու բարակ թելիկներից սարդոստայն են հյուսում:
Մեղմ, զգայուն, նուրբ, բարակ:
Սարդի փորի տակ կան փոքրիկ գորտնուկներ, որոնցից……մի քանի անցք ունի:
Ամեն մի, յուրաքանչյուր:
Ահա՛ այդ անցքերից……այնպիսի հեղուկ, որն օդում պնդանում է ու թելի տեսք ստանում:
Մեկնել, ծագել, բուսնել, դուրս գալ:
Հարավային Ամերիկայի անտառներում կա մի ……սարդ՝ թավամազ սարդը, որի երկարությունը տասը սանտիմետր է:
Դյուցազն, տիտան, բարձրահասակ, հսկա:
Նրա հյուսած……տեղի բնակիչները ձուկ են որսում:
Թակարդ, ցանց, որոգայթ:

Նախադասությունները լրացրո՛ւ.

- Ա՛յ, սուտասան,
  _____
  _____
  _____
- Պո՛ւյ-պո՛ւյ մուկիկ,
  _____
  _____-_____,
  Չախչա՛խ թագավոր,
  _____
  _____,
  Անբա՛ն Հուռի:_____

Հիմա էլ նույն նախադասությունները գրի՛ր առանց Ա՛յ, Պույ-Պույ, Չախչախ, Անբան բառերի:

_____
_____
_____
_____
_____
_____
_____

Տեսա՞ր՝ ո՛ր բառերը շեշտվեցին:

Բառերը բացատրի՛ր

Ձյունածաղիկ-
Ծաղկածով-
Լուսնակերես-
Ծովաչյա-

Նախադասությունները լրացրո՛ւ այս բառերով.

Մենք, ինքներս, դուք, ինքներդ, նրանք, իրենք:
……այսպիսին ենք՝ տեսե՛ք:
Սա մենք……ենք կառուցել: Գեղեցի՛կ է:
…….ա՛յ այսպիսի կարմիր այտեր ունեք:
Դուք ……էլ գիտեք, թե որքան կլորիկ եք, ա՛յ այսպիսին:
……են կերել մեր հացահատիկը: Ա՛յ այսպիսին են այդ շատակերները:
Իսկ նրանք……..վախենում են ա՛յ այս կենդանուց:

Ընդծված բառերին նայի՛ր և դրանց հակառակ իմաստն ունեցող բառերը գրի՛ր:

Եղբայրը հաշտ է քույրիկի հետ: Պատմում է այսպեղ.
Այնքան **լավն է** քույրիկս: **Աշխատասեր է, մաքրասեր**: Շատ **գեղեցիկ է**: **Բարձրահասակ** է, **նուրբ** ձայն ունի: **Լավ է** սովորում: **Ամեն ինչ** գիտի: Նա շատ **բարի է**: **Ուրախանում է**, երբ ինձ համար լավ բան են գնում: Երբ դասերը պատրաստում է, **օգնում է** ինձ: Քույրիկս **խելացի է**: Ամեն ինչ **շուտ** է հասկանում:

Եղբայրը կռվել է քույրիկի հետ: Պատմում է այսպես.
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Գտի՛ր հեքիաթի հերոսներին և դիմի՛ր նրանց.

Ծիտը դես է թռչում, դեն է թռչում, տեսնում է՝ մի պառավ է ման գալիս, թոնիր վառի, հաց թխի: Ասում է.

- ……., ոտիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, տեսնում՝ մի հովիվ անհաց կաթ է ուտում: Ասում է.

- ……., կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում: Ա՛յ, հացն ա՛ռ, կաթի մեջ բրդի՛, կե՛ր, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է տեսնում՝ մի տեղ հարսանիք են անում, մսացու չունեն, որ մորթեն: Ասում է.

- …….ի՞նչ եք մոլորել: Ա՛յ, իմ գառն առեք, մորթեցե՛ք, քեֆ արեք: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, գնում, գնում է տեսնում՝ մի աշուղ մի ճամփով գնում է: Ասում է.

- ……., ա՛ռ էս հարսին պահի քեզ մոտ: Ես էլ գնամ, քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գրեցի՛ր՝ շեշտերը չմոռացա՞ր դնել: Լա՛վ է:

Պատմությունն ընդարձակի՛ր՝ միայն նախադասությունների մեջ բառեր ավելացնելով:

Ուղտը տեսավ, որ եզը պարծենում է եղջյուրներով, նախանձեց և ուզեց ինքն էլ ունենալ: Զևսի մոտ գնաց, եղջյուրներ խնդրեց: Զևսը զայրացավ, որ ուղտն ավելին է պահանջում: Ուղտին եղջյուրներ չտվեց, ականջներն էլ կտրեց:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Հատվածները կարդա՛: Ուշադրություն դարձրո՛ւ ընդգծումներին ու չակերտներին:

Աքաղաղն առաջին անգամ էր տեսնում իր ստվերն այդքան մեծ: Տեսավ, շատ զարմացավ և ասաց մտքում. **«Ես որ այդքան մեծ եմ՝ հապա էլ ինչո՞ւ եմ վախենում մարդուց, կովից, այծից, շնից»:**

Արևը շատ էր հոգնել, ման էր եկել ամբողջ օրը:
«Հերիք է,-մտածեց,-գնամ պառկեմ ու քնեմ»:
Տերևն ուրախ սվսվում էր, որ կանգ առավ՝ «Էս ի՞նչ է,-մտածեց,-արևն էլ չի երևում, ես էլ պառկեմ ու քնեմ»:
Թռչնակը երգում էր ծառի վրա, հանկարծ լռեց. «Էս ի՞նչ է,-մտածեց,-ո՛չ տերևն է սվսվում, ո՛չ արևն է երևում, ես էլ գնամ ու քնեմ»:

Հասկացա՞ր՝ որ դեպքում են չակերտներ («») դրվում: Ապրե՛ս:

Պատմի՛ր այն նվերի մասին, որը խոստացել են և ստանալու ես: Ինչպիսի՞ն է այն լինելու

Սկսի՛ր այսպես.
Գիտե՞ք, ես ……եմ նվեր ստանալու:
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Լրացրո՛ւ.

«…… ատուն:
«…… կած գայլը:
«…… կ:
«…… », - երևի ստածում էր խաղալիքս:
«…… », - մտքումս ուրախացա ես:
«…… », - մտքումս բարկացա ես:

Պատմությունն ընդարձակի՛ր՝ միայն նախադասություններն ընդարձակելով:

Ոստիկանը ճանապարհին կանգնեցնում է ծածկված սայլը և հարցնում տիրոջը:

- ի՞նչ եք տեղափոխում:
- Խոտ,-շշուկով պատասխանում է մարդը:
- Իսկ ինչո՞ւ եք ցածր խոսում:
- Որպեսզի ձիերը չլսեն:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Դու բարի կախարդ ես և որոշել ես կառուցել այնպիսի քաղաք, որտեղ կապրեն միայն երեխաները:

Պատմի՛ր, թե ինչպիսին է լինելու այդ քաղաքը:

Սկսի՛ր այսպես.
Երեխաների քաղաքի անունը լինելու է

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Հարցերին պատասխանի՛ր.

Տարվա ո՞րերորդ ամսին ես ծնվել:

_____

Ո՞րերորդ դասարանում ես սովորում:

_____

Անցյալ տարի ո՞րերորդ դասարանում էիր սովորում:

_____

Հաջորդ տարի ո՞րերորդ դասարանում ես սովորելու:

_____

Ո՞րերորդ նստարանին ես նստում:

_____

Ո՞րերորդ նստարանին է նստում ձեր դասարանի ……..:

_____

Առաջին բառն օգտագործեցի՞ր:
Նկատեցի՞ր մյուս թվերի անուններն ինչպես ստացվեցին: Փորձի՛ր գրել այդ մասնիկների անունները:

_____

Լրացրո՛ւ

Երբ ինձ վրա բարկանում են, ես մտքումս ասում եմ «_____»
Թափառող շունը երևի մտածում է. «_____»
Ծննդյանս օրերին մտածում եմ. «_____»
Երբ դասերից հետո տուն եմ գնում, մտածում եմ. «_____»

Զմռանը թռչունները երևի մտածում են. «_____»
Հորդառատ անձրևը երևի այսպես է մտածում. «_____»

Մեծատառով սկսեցի՞ր: Վերջում չակերտներն ու վերջակետը չմոռացա՞ր դնել: Լա՛վ է:

Բառը գտի՛ր և գրի՛ր.

1. Դանդաղաշարժ կենդանի, որի տունը միշտ իր հետ է:
2. «Ծիտը», «Ուլիկը», «Բարեկենդանը» Հովհաննես Թումանյանի
3. ……., րոպե, ժամ, օր, շաբաթ, ամիս, տարի:
4. Երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, _____
5. Դաս-ընկեր-դասընկեր, այս-օր-այսօր, համ-բույր-
6. Հրաման տալ-հրամայել, բարև տալ-բարևել, երդում տալ-
7. Հարց տալ-հարցնել, կատակ անել-կատակել, համբույր տալ-

Ուսուցչիդ ցո՛յց տուր գրածդ բառերը:

Յուրաքանչյուր նախադասության համար տրված բառերից մեկն ընտրի՛ր և գրի՛ր.

Քնած առյուծի մարմնի վրայով մի մուկ……:
Ընթանալ, արշավել, վազել, սլանալ, խուժել:
Առյուծը զարթնեց, բռնեց նրան և այն է՝ ուզում էր խժռել, մուկը……. որ բաց թողնի իրեն, հավատացնելով, որ կհատուցի իր փրկության համար:
Հայցել, խնդրել:
Առյուծը քա՛հ-քա՛հ……..ու բաց թողեց նրան:
Կչկչալ, փոթկալ, ծիծաղել:
Այնպես……., որ առյուծն ընկավ որսորդների ճանկը, ու նրան պարաններով կապկպեցին ծառին:
Տեղի ունենալ, պատահել:
Մուկն……..այդ մասին, վազեց եկավ, կրծեց պարանն ու ազատեց առյուծին:
Հասկանալ, իմանալ, կռահել:

Հարցազրույց վարի՛ր այս գրքի հերոսի հետ:

Ընդգծված բառակապակցությունների փոխարեն գրի՛ր իմաստով մոտ բառեր կամ բառակապակցություններ:

Ժուկով-ժամանակով Բաղդադ քաղաքում **գահին նստած էր** Հարուն Ալ Ռաշիդ թագավորը: Հարուն Ալ Ռաշիդ թագավորը սովորություն ուներ՝ շորերը փոխած **ման էր գալիս** իմանալու, թե ինչ է կատարվում իր մայրաքաղաքում: Մի գիշեր էլ էսպես, դերվիշի շոր մտած, **անցնելիս է լինում** մի խուլ փողոցով: Մի աղքատ տնակից երգի ու նվագածության **ձայներ էին գալիս**: Կանգ է առնում, **միտք է անում**, **հետաքրքրությունը վառում է** ու ներս է մտնում: Ներս է մտնում տեսնում՝ դատարկ ու մերկ մի տնակ, կրակի դեմը փռած կարպետի վրա նստոտած տան տերն ու երաժիշտները: Աղքատ ընթրիքի **շուրջը բոլորած**՝ նվագում են, երգում ու **քեֆ անում**:

Փորձի՛ր գտնել՝ ովքե՛ր են այս խոսքերն ասում և գրի՛ր պատմողի խոսքերը:

- Էս ի՞նչ է թռչկոտում ճպռոտ ճպուռը, ասես չի կարող ինձ նման ծանր ու մեծ նստել: Սրանք ի՞նչ են թռչում, թռչկոտում, ի՞նչ են երգում, էլ ուրիշ գործ չունե՞ն: Ա՛յ, ուրիշ բան եմ ես, ո՛չ թռչկոտում եմ, ո՛չ երգում: Թռչե՞լս որն է, երգե՞լս՝ որը:

- Է՛, գիտե՞ս ինչու ենք լուռումունջ մնացել էստեղ. ո՛չ թռչել գիտենք և ո՛չ էլ երգել:

Պատմողի խոսքից հետո միջակետ դնելը չմոռացա՞ր: Լա՛վ է:

Բառերը բացատրի՛ր.

Զյունաշող-
Ծովաշխարհ
Զյունավարդ
Ծաղկաստան
Խաղատիկնիկ

Սա ծտի խոսքն է.

- Նանի՛ ջան, նանի՛, ոտիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:
- Պատմողի խոսքը՝ ծիտն ասում է, գրի՛ր այնպես, որ լինի՝

Ա. ծտի խոսքի առջևում

Բ. ծտի խոսքի մեջտեղում

Գ. ծտի խոսքի վերջում

Ինչպե՞ս կզրուցեն իրար հետ հեքիաթների հերոսները:

Գրի՛ առ այդ զրույցը

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Նախադասությունները լրացրո՛ւ.

- _____, - միշտ զարմանում եմ ես:
- _____, սովորաբար ասում են մեծերը:
- _____, անընդհատ հիշեցնում է ուսուցիչը:
- _____, ամեն առավոտ ասում է մայրիկս:
- _____, հանկարծ հայտարարեց լուսաբացը:
- _____, միալար կրկնում էր անձրևը:
- _____, չէր դադարում փնթփնթալ քամին:

Պատմի՛ր քո սիրած խաղալիքի մասին.

Ա Ինչպիսի՞ն է նա
Բ Ինչպե՞ս է նա հայտնվել քեզ մոտ
Գ Պատմի՛ր՝ ինչպե՞ս ես խաղում նրանով:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Նայի՛ր ընդգծված բառերի և նախադասությունները լրացրո՛ւ.

Բերանում շունչ չկա, կենդանի չէ, ոչ մի շեն չկա, ջուր չկա:
Գնացի՛նք, գնացի՛նք շատ թե քիչ, մեկ էլ տեսնենք երեք լիճ, երկուսը ցամաք, մեկի մեջ էլ ……: Մեկ էլ ըիը, մտիկ տանք, որ էս անջուր լճում լողում են, ճչում երեք հատ սպիտակ բադ, երկուսը սատկած, մեկն էլ……: Գնացի՛նք, գնացի՛նք, հասանք մի տեղ, մեկ էլ տեսանք երեք գյուղ, երկուսի տեղը չի երևում, մեկում էլ……..: Էս անշեն գյուղում դես ման եկանք, դեն ման եկանք, մի տուն գտանք, մեջը երեք պառավ, երկուսը մեռած, մեկի էլ……:

Սա թագավորի խոսքն է.
Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ բոլոր թագավորության կեսը կտամ նրան:

Պատմողի խոսքը՝ թագավորը հայտնում է, գրի՛ր այնպես, որ լինի՝

Ա. թագավորի խոսքի առջևում
_____
_____
_____
_____

Բ. թագավորի խոսքի մեջտեղում
_____
_____
_____
_____

Գ. թագավորի խոսքի վերջում:
_____

_____
_____
_____

Հեքիաթի հերոսներին գտի՛ր և դիմի՛ր նրանց.

Կարելի է դու գիտենաս, _____ էն սարի ետևում ի՞նչ կա:
Իմ հերը մի դագանակ ուներ, _____էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում:
Ինչո՞ւ եք ձեռքով փայտ կտրում, _____, մի՞թե կացին չունեք:
Կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում, _____, ա՛յ, լոշը առ, կաթի մեջ բրդի, կեր:
Վո՛ւյ, _____, որ բամբակը բերեմ ձեզ տամ, կզգե՞ք:

Շեշտերը դրեցի՞ր, շա՛տ ապրես:

Հորինի՛ր պատմություն այնպիսի թռչունի մասին, որն այլևս չկա, վերացել է, ոչնչացել:

Սկսի՛ր այսպես.
Շատ հին ժամանակներում մի թռչուն է եղել:
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Նախադասությունները լրացրո՛ւ հարցերին համապատասխան բառերով.

Ձմեռն ու գարունը

Ձմեռը ծաղրեց գարնանը ու (ի՞նչ արեց)……

- Հենց որ գալիս ես, (ովքե՞ր)……..հանգիստ չունեն: Ոմանք գնում են մարգագետիններն ու (ինչե՞րը)……, որտեղ սիրում են ծաղիկները հավաքել, շուշաններով ու վարդերով (ի՞նչ անել)……, մյուսներն էլ նավարկում են, որ տեսնեն, թե ովքե՞ր են ապրում (որտե՞ղ)……: Իսկ ես թագավորում եմ ինչպես ամենակարող արքա և (ի՞նչ) ……: Մարդկանց ստիպում եմ ոչ թե երկնքին նայել, այլ ոտքերի տակ՝ (որտե՞ղ)……..: Ստիպում եմ, որ դողդողան ու (ի՞նչ անեն)……և օրերով (որտեղի՞ց)……դուրս չգան:
- Ա՛յ հենց դրա համար էլ մարդիկ քեզնից միշտ (ինչպե՞ս) ……են բաժանվում,-պատասխանեց գարունը,-իսկ իմ անունը նրանց (ինչպե՞ս) ……է թվում:

Այս քաղաքում ապրում են թվերը

Առաջին փողոցում ապրում են այս թվերը.

Մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը:

Երկրորդ փողոցում ապրում են այս թվերը:

Տասը, քսան, երեսուն, քառասուն, հիսուն, վաթսուն, յոթանասուն, ութսուն, իննսուն:

Երրորդ փողոցում ապրում են այս թվերը.

Հարյուր, հազար միլիոն:

Ես գիտեմ, որ երրորդ փողոցում ապրող թվերը, երբ հյուր են գնում կամ հյուր են ընդունում մյուս թվերին, միշտ հեռու են կանգնում նրանցից:
Իսկ առաջին, երկրորդ փողոցներում ապրող թվերը շատ թվամոտ են, ջերմ գրկախառնվում են միմյանց:
Թվերի տոնահանդես է: Երեք փողոցների թվերն էլ եկել և խումբ-խումբ հավաքված զրուցում են: Ահա՝ դրանցից մի քանիսը:

Դպրոցի տնօրենը դու ես: Ստեղծելու ես քո՛ դպրոցը: Այն ինչպիսի՞ն է լինելու:

Սա գրքի հերոսի նամակն է քեզ

Սա քո նամակն է գրքի հերոսին

Սա ուսուցչիդ ուղղված շնորհակալական նամակն է

Սա այն բացիկն է, որով շնորհավորում ես ընկերներիդ ամառային արձակուրդի առթիվ:

Երաշխավորված է ՀՀ լուսավորության նախարարության կողմից

Մ. Սիմոնյան Մայրենի լեզու
Գիրք-տետր չորրորդ դասարանցիների համար.
Երևան, 1985, «Շաղիկ»- 116էջ

© «Շաղիկ» հրատարակչություն